2022, ՄԱՐՏ Բ, ԹԻՎ 6 (602)

Էջմիածին

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Հաղորդագրություն

Մարտի 23-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարվեց Գերագույն հոգեւոր խորհրդի հայաստանյան անդամների ժողով, որի ընթացքում ի թիվս այլ հարցերի քննարկվեց նաեւ տիար Գագիկ Ծառուկյանի կողմից Հայաստանում մեր Տեր Հիսուս Քրիստոսի արձան կառուցելու նախաձեռնությունը: Արձանագրվեց, որ ծրագրի առնչությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը քննարկումներ է ունեցել տիար Գագիկ Ծառուկյանի հետ՝ հայտնելով պաշտամունքային, առավել եւս տերունի արձանաշինության վերաբերյալ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ավանդական մոտեցումները: Գերագույն հոգեւոր խորհուրդը վերահաստատեց ԳՀԽ-ի մարտի 9-ի ընդլայնված նիստում հարցի վերաբերյալ որդեգրված դիրքորոշումը՝ հանդես գալով հետեւյալ հայտարարությամբ.

«Գերագույն հոգեւոր խորհուրդը բարձրորեն գնահատում է տիար Գագիկ Ծառուկյանի եկեղեցաշինական անուրանալի ծառայությունները, որոնցով նա մեծապես նպաստել է եկեղեցու հոգեւոր-քարոզչական առաքելության արդյունավորմանը: Միաժամանակ եկեղեցին ընդունելի չի համարում մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի արձանի տեղադրումը՝ նկատի առնելով, որ այն հարիր չէ Հայ Եկեղեցու դարավոր պատկերագրական եւ պաշտամունքային ավանդույթին:

Եկեղեցու համար ընդունելի կարող է համարվել Փրկիչ մեր Տիրոջ հարթաքանդակի կառուցումը՝ «Ամենափրկիչ» խաչքարերի սկզբունքով:

Գերագույն հոգեւոր խորհրդի հորդորն է նախաձեռնության հեղինակներին եւ մասնակիցներին՝ զերծ մնալ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ավանդույթին հակասող նախագծերից եւ առաջնորդվել մեր ազգային-եկեղեցական մշակույթին, եկեղեցաբանական եւ աստվածաբանական սկզբունքներին համահունչ մոտեցումներով»:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵԾ

ՀՀ դատավորների միության անդամներին

Մարտի 27-ին ՀՀ դատավորների միության անդամներն ուխտավորաբար այցելեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Ս. Գայանե վանքում մասնակցելու Մեծ պահքի Դատավորի կիրակիի Պատարագի արարողությանը:

Հավարտ սուրբ Պատարագի՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Վեհարանում ընդունեց միության անդամներին՝ գլխավորությամբ միության նախագահ Ալեքսանդր Ազարյանի:

Պարոն Ազարյանը, հայցելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը, նշեց, որ ՀՀ դատավորների միության անդամներով համախումբ՝ Դատավորի կիրակիին առաջին անգամն են ուխտավորաբար այցելում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Միության նախագահը նաեւ հույս հայտնեց, որ իրենց այս ուխտագնացությունը կդառնա գեղեցիկ ավանդույթ:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետն իր բարեմաղթանքները փոխանցեց ներկաներին եւ անդրադառնալով օրվա խորհրդին՝ նկատեց, որ դատավորի առաքելությունը պետք է ուղեկցվի Աստծու նկատմամբ երկյուղով եւ մարդկանց հանդեպ բարձր պատասխանատվությամբ: Այս առիթով Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ դատավորներն իրենց ծառայության համար ուղենիշ կդարձնեն ավետարանական այն ճշմարտությունը, թե օրենքն է մարդու համար, եւ ոչ թե մարդը՝ օրենքի:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց նաեւ դատավորների հարցերին, որոնք վերաբերում էին ՀՀ դատավորների միության եւ Մայր Աթոռի հետագա գործակցության հեռանկարներին, Հայաստանում ու Արցախում առկա մարտահրավերներին:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Դսեղի պատմաճարտարապետական նշանավոր հուշարձանները

Էս տախտի վրա աղոթում մի վանք,
Էն ժայռի գըլխին հըսկում է մի բերդ...
Իսկ քարի գըլխից, լուռ մարդու նըման,
Նայում է ձորին մի հին խաչարձան:
Հ. Թումանյան

ՀՀ Լոռու մարզի Թումանյանի տարածաշրջանի Դսեղ գյուղը՝ հայ հանճարեղ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդավայրը, գտնվում է ծովի մակարդակից շուրջ 1225 մ բարձրության վրա, մարզկենտրոնից մոտ 30 կմ հյուսիս-արեւելք, քաղաքամայր Երեւանից մոտ 180 կմ հեռավորության վրա: Դսեղը հարուստ է պատմաճարտարապետական հուշարձաններով ու տեսարժան վայրերով: Գյուղում ու շրջակայքում պահպանված հուշարձաններից են ամրոցի ավերակները (Ք. ա. II–I հազարամյակներ),

Սրբոց Քառասնից մանկանց վանք

դամբարանաբլուրը, դամբարանադաշտերը, մենհիրը, գաղտնուղին, ապարանքի մնացորդները, քարայր-կացարանները, գյուղատեղիները, երկու վանական համալիրները, մի քանի մատուռներ, եկեղեցիներ, խաչքարեր, միջնադարյան գերեզմանոցներ, տապանաքարեր, կացարանների մնացորդներ, տնատեղեր, ձիթհաններ, աղբյուրներ, միջնադարյան կամուրջը, Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներին նվիրված հուշարձանը, հուշաղբյուրը, մեծ բանաստեղծ Հ. Թումանյանի արձանը, տուն-թանգարանը, կիսանդրին: Գյուղի կենտրոնական մասում պահպանված հուշարձաններից են նաեւ «միանավ դահլիճ» եւ «եռանավ դահլիճ» տիպի խոնարհված եկեղեցիները, խաչարձանը, քառակող կոթողը, բազում խաչքարեր: ➥ էջ 2, 7

Դսեղի պատմաճարտարապետական նշանավոր հուշարձանները

Բարձրաքաշ Ս. Գրիգոր վանքը

➥ էջ 1

Բարձրաքաշ Սուրբ Գրիգոր վանքը գտնվում է Դսեղ գյուղից մոտ 2 կմ հյուսիս-արեւելք՝ Մարց գետակի ձախ ափին՝ Ձաղիձորի անտառապատ ձորալանջին: Վանական համալիրը (այժմ կիսավեր) բաղկացած է եղել երկու եկեղեցուց, գավթից եւ մատուռներից, Դսեղի Մամիկոնյանների տոհմական գերեզմանոցից, ձիթհանի, խաչքարերի մնացորդներից:

Սուրբ Գրիգոր եկեղեցին (X դ.), թաղածածկ միանավ դահլիճ է, որին կից՝ հարավից, Համազասպ Մամիկոնյանի թոռ եւ Սարգսի որդի Մարծպան Մամիկոնյան իշխանը 1221 թ. կառուցել է համալիրի գլխավոր՝ Սուրբ Աստվածածին գմբեթավոր եկեղեցին: Եկեղեցու ուշագրավ առանձնահատկություններից են մույթերի փոխարեն զույգ սյուների կիրառումը եւ ներսից հնգանիստ խորանը: Եկեղեցին ունի երկու մուտք՝ արեւմտյան եւ հարավային կողմերից, իսկ հյուսիսից նրա մեջ բացվում է միանավ դահլիճի հարավային մուտքը: 1234 թ. Հովհաննես վարդապետն ու իր եղբայր Սարգիսը կառուցել են Սուրբ Հարություն մատուռը (ըստ տեղացիների՝ «Ագռավի տապան»): 1245 թ. Մարծպանի որդի Ասլանբեկը երկու մատուռ է կառուցել եւ վանքին նվիրել ոսկով ու մարգարիտներով զարդարված Ավետարան: 1247 թ. ավարտվել է Ս. Աստվածածին եկեղեցուն հարավից կից գավթի կառուցումը (անբարենպաստ տեղանքով պայմանավորված՝ գավիթը կցվել է ոչ թե արեւմուտքից, այլ հարավից): Գավիթը պատկանում է հայկական նմանատիպ կառույցների ամենատարածված՝ կենտրոնակազմ «քառասյուն գմբեթավոր» տիպին, սակայն բացառիկ առանձնահատկությամբ. արեւելքում ունի շենքի ծավալից դուրս եկող խորան, որի ճակատին մագիլներում գառ բռնած երկգլխանի արծվի («ճանկած արծիվ») հարթաքանդակն է: 1266 թ. Գորգ վարդապետը կառուցել է վանքի ձիթհանը: Համալիրի հարավային կողմում՝ Ս. Հարություն մատուռի շուրջը, խաչքարերով գերեզմանոցն է, արեւմտյան կողմում՝ խցերի ավերակները, ձորում պահպանվել են Մամիկոնյանների կառուցած վանքի կամրջի (XIII դ.) խելերը: Բարձրաքաշ Ս. Գրիգոր վանքը մասնակի նորոգվել է 1939 թ., մաքրման ենթարկվել 1950 թ. եւ պեղվել 1969 թ.:

Սրբոց Քառասնից մանկանց վանքը գտնվում է Դսեղի հյուսիսարեւմտյան կողմում՝ Դեբեդի կիրճի ստորին հարթակի վրա՝ «Տախտեր» կոչվող հին բնակավայրի տարածքում: Սրբավայր կարելի է հասնել միայն ոտքով՝ Դսեղից դեպի Դեբեդի կիրճ տանող քարքարոտ ճանապարհով կամ Ձորագետ համայնքից՝ բարձրանալով դեպի Դսեղ:

Վանական համալիրը բաղկացած է եղել եկեղեցուց, ժամատնից, կացարաններից, տնտեսական օժանդակ շինություններից, խաչքարերից:

Եկեղեցին (XIII դ.) ուղղանկյուն հատակագծով կառույց է, որի գմբեթը չի պահպանվել, պատերը (հատկապես հարավայինը), թաղերն ու գմբեթակիր կամարները խարխլված ու կիսաքանդ վիճակում են: Հորինվածքով «գմբեթավոր դահլիճ» տիպի է, որտեղ դասական հորինվածքի արեւելյան որմնամույթերը համակցված են խորանի եզրային մասերին եւ նրա երկու կողմերին կից ավանդատների ճակատային պատերին: Ավանդատները կրկնահարկ են՝ շեշտված երկայնական ձգվածությամբ, որոնք արեւելյան կողմում ավարտվում են կիսաշրջանաձեւ խորշերով: Եկեղեցին կառուցված է ֆելզիտե վարդագույն նրբերանգ սրբատաշ քարերով: Որմնամույթերը բազալտից են: Հարավային եւ արեւելյան կողմերում կան ուշագրավ քանդակներով խաչքարեր: Պատերը հարուստ են արձանագրություններով, խաչանախշերով ու վիմագրերով: Եկեղեցու միակ մուտքն արեւմտյան կողմից է:

Ժամատան հետքերը չեն նշմարվում, սակայն արեւմտյան պատի մի անթվակիր արձանագրությունից որոշարկվում են ժամատան առկայությունը եւ նույնիսկ կառուցողը. «Ողորմութեամբն Աստծոյ ես խաչատուր ծառայ Աստուծոյ շինեցի զժամատունս եւ սալեցի զեկեղեցիս...»:

Ըստ վիմագրական տեղեկությունների՝ վանքի շինությունները քանիցս նորոգվել են XIII դ. վերջերին եւ հետագա դարերում:

Համալիրում մաքրման եւ տարածքի բարեկարգման աշխատանքներ են իրականացվել նաեւ 2004 թ.՝ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի հովանավորությամբ, ՊՄՊ Լոռու մարզային ծառայության կողմից իրականացված «Նպաստ՝ աշխատանքի դիմաց» ծրագրի շրջանակներում: ➥ էջ 7

Ալեքսանդրապոլի չկառուցված կուսանոցը եւ Գեւորգ Դ Կաթողիկոսի լուսավորչական կրեդոն

Հայաստանի ազգային արխիվում պահվում է Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցի Կաթողիկոսի՝ որոշակի հետաքրքրություն ներկայացնող մի կոնդակ: 1860 թվականի մայիսի 29-ի այդ կոնդակով Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ընդառաջ Ալեքսանդրապոլում բնակվող երկու կույսերի խնդրանքին, արտոնում է ժողովրդական հանգանակություն կազմակերպել՝ քաղաքում կուսանոց կառուցելու համար:

«Հոգեւոր կառավարութեան Հայոց Աղէքսանդրապոլ քաղաքի ծանուցանեմք, զի ընթերցեալ մեր առ մեզ մատուցեալ զաղերսագիր երկուս կուսանացն՝ մահտեսի Գայիանէ Ղանտիլեան եւ Շողակաթ Գէորգեան, որոց ի սիրտ եւ ի հոգի բորբոքեալ գոլով սէրն Աստուածային, ցանկան տեղի ինչ բնակութեան ինքեանց կուսանաց անուամբ առ նորոգ կառուցանելի եկեղեցեաւ, որ յանուն սբ Աստուածածնի, ուստի խնդրեն ի մէնջ տալ ինքեանց զկոնդակ օրհնութեան յանուն Կովկասեան վիճակաց, որպէս զի շրջեցուցանելով զայն ի նոսին վիճակսն, ժողովեսցեն զկամաւոր տուրս նուիրանաց՝ յօժանդակութիւն եւ ի նպաստաւորութիւն այնմ շինութեան, որում ինքեանք ցանկան»,— կարդում ենք կաթողիկոսական կոնդակում:

Մատթեոս Ա Կաթողիկոսն իր այդ կոնդակով նաեւ պատվիրում է ընտրել երկու քահանայի, որոնք եւ կկազմակերպեն հանգանակությունը:

Ալեքսանդրապոլում, սակայն, այդպես էլ կուսանոց չի կառուցվում, թեեւ խնդրի արծարծումը շարունակվում է մեկ տասնամյակից ավելի տարիներ:

Ազգային արխիվում պահվող մի քանի այլ վավերագրեր, ինչպես նաեւ ժամանակի մամուլի հրապարակումները որոշակի լույս են սփռում այս պատմության հետագա ճակատագրի վրա:

Հայրապետական կոնդակից մեկ տարի անց, 1861 թվականի հունվարի 16-ի գրությամբ, Ալեքսանդրապոլի առաջնորդական փոխանորդ Հարություն եպիսկոպոսը Մատթեոս Կաթողիկոսին ուղղած նամակում նշում է արդեն չորս կույսի անուն՝ Գայանե Ղանդիլյան, Շողակաթ Գեւորգյան, Սանդուխտ Սարգսյան եւ Գայանե Հարությունյան:

Այս նամակում խոսվում է այն ծախսերի մասին, որ անհրաժեշտ էին կույսերին:

Ինչպես պարզ է դառնում նամակից, մինչ կուսանոց մտնելը կույսերը դեռեւս հոգեւոր կրթության կարիք են ունեցել: Նրանք կարոտ են եղել համեստաբարո մի ուսուցչի, որ իրենց կուսուցաներ Աստվածաշունչ, սրբազան գրքեր եւ հատկապես Վարք սրբոցը, որը կարդալով՝ որպես օրինակ կունենային սրբերին եւ նրանց օրինակով կհրաժարվեին այս աշխարհից:

Անհրաժեշտ էր նաեւ կույսերին ապահովել սննդով եւ հանդերձանքով:

Այս ամենը մեծ ծախսեր էր ենթադրում, քանզի նրանք համարյա բոլորովին անգրագետ էին, եւ առանց վճարի որեւէ մեկը նրանց կրթությամբ չէր կամենում զբաղվել: Սրբազանն իր նամակում խնդրում է Վեհափառի տնօրինությունը՝ արդյոք կույսերի կարիքները պետք է հոգալ կուսանոցի համար հավաքված գումարի՞ց, թե՞ գտնել այլ աղբյուրներ:

Արխիվում պահվում է նաեւ մեկ այլ փաստաթուղթ՝ կուսանոցի կառուցման համար անհրաժեշտ եւ արդեն հանգանակված գումարների վերաբերյալ: Այն Ալեքսանդրապոլի առաջնորդական հաջորդ փոխանորդ Մովսես եպիսկոպոսի՝ 1862 թվականի փետրվարին Էջմիածնի սբ սինոդին ուղղած գրությունն է, որտեղ սրբազանը հայտնում է, որ հանգանակված գումարը հազիվ հասնում է 400 ռուբլու, մինչդեռ կուսանոցի համար անհրաժեշտ բոլոր ծախսերը կկազմեն շուրջ 13 հազար ռուբլի:

Փաստորեն՝ Ալեքսանդրապոլում կուսանոց կառուցելու հարցը դանդաղում է: Իսկ 1865 թվականին վախճանվում է Մատթեոս Ա Կաթողիկոսը:

Կուսանոցի խնդրի արծարծմանը կրկին



հանդիպում ենք տարիներ անց՝ թիֆլիսահայ մամուլում: 1873-ին Թիֆլիսում հրատարակվող «Մեղու» եւ «Մշակ» թերթերի միջեւ ծավալված բանավեճից պարզ է դառնում, թե ինչու այդպես էլ չկառուցվեց Ալեքսանդրապոլի կուսանոցը:

«Մեղու»-ն իր թիվ 20 համարում հիշեցնում է. «Մի քանի տարի առաջ քաղաքի կուսակրօն կանայք եւ օրիորդները մինչեւ 25 խնդրագործ են եղել Վեհափառ Կաթուղիկոսին քաղաքի մէջ մի կուսանաց վանք շինելու եւ նրա մեջ օրիորդներ սովորցնելու համար այն պայմանով, որ նոքա այդ վանքի շինութեան համար չեն ուզելու քաղաքից եւ ոչ մի կոպէկ: Վեհափառ կաթուղիկոսը հարցրեց քաղաքացւոց համաձայնութիւնը: Հրաւիրեալների ժողովը մարտ ամսին հերքեց կուսակրօնների խնդիրը»:

Շատ չանցած, ի պատասխան այս հրապարակման, թիֆլիսահայ «Մշակ»-ում տեղ են գտնում Ալեքսանդրապոլից Սուքիաս վարդապետ Պարզյանի պարզաբանումները. «Ոչ թէ մի քանի տարի յառաջ, այլ ամբողջ 13 տարի, քաղաքիս կուսանք ոչ թուով 25, այլ՝ երկու»:

Ըստ էության՝ Սուքիաս վարդապետը հաստատում է, որ կուսակրոն կանանց խնդրանքն իսկապես քննարկվել է քաղաքի ազգայինների ժողովում, որտեղ նրանք անկարող են համարել իրենց կուսանոց պահել: Սակայն Վեհափառ Հայրապետը չէ, որ հարցրել է քաղաքացիների համաձայնությունը, այլ ժողովը հրավիրվել է միայն կույսերի խնդրանքով:

«Մեղու»-ն, իր հերթին, հայտարարում է ազգայինների մերժման իրական պատճառը: Այն է՝ տարիներ առաջ, երբ պետք է կառուցվեր կուսանոցը, ուր պետք է կրթվեին նաեւ Ալեքսանդրապոլի օրիորդները, քաղաքում չկար օրիորդաց վարժարան: «Իսկ այժմ, որ հանգուցեալ Արղութեանի շնորհիւ հիմնած մեր օրիորդական դպրոցը յառաջադէմ քայլերով ընթանում է, աւելորդ կլինէր ժողովրդի կողմից պաշտպանել մի երեւակայական վանքի մեջ փակուած օրիորդների երեւակայական դպրութիւն խաւարապաշտ կանանց ձեռքում: Ահա այս էր միակ պատճառը, որ ժողովուրդը հերքեց կուսակրօնների կանացի առաջարկութիւնը եւ ո՛չ թէ նոքա (ժողովուրդը) անկարող համարեցին իրենց կուսանաց պահպանել»:

«Մշակ»-ը կրկին փորձում է հակադարձել վերոնշյալին եւ կրկին ակամա համաձայնում եղելության հետ՝ նշելով քաղաքում օրիորդաց նոր դպրոցի անհրաժեշտության մասին:

«Ժողովուրդը, ցոյց տալով միշտ գովելի ուսումնասիրութիւն, չէր կարող բաւականանալ միայն Արղութեանցի օրիորդաց դպրոցով:

Եւ եթէ Աղեքսանդրապոլու արական սեռի համար արքունի, հոգեւոր եւ քսանի չափով մասնաւոր վարժարանները չեն բաւականանում, մի՞թէ իգական սեռի կրթութեան համար միակ Արղութեանցի ուսումնարանը կարող էր գոհացուցիչ լինել. եւ մի՞թէ օրիորդաց դպրոցների սակաւութիւնը չէր, որ գոյացրեց նորերումս նոր դպրոց Սահականոյշ անունով»,— գրում է «Մշակ»-ը: ➥ էջ 3

ԵՐԲ ԵՂԵՌՆԵՐԸ ԿԱՆԳՈՒՆ ԵՆ

Սկիզբը՝ թիվ 3–5

Բայց դառնանք վեպին: Դեպքերի զարգացումներն աստիճանաբար փոխում են Արամի դիրքորոշումը: Ժողովրդին *«ապրել սովորեցնել»* ու *«խաղաղ կյանք»* ապահովել ցանկացող Արամը համոզվում է, որ թշնամին միշտ էլ գալու է եւ այրելու ու ավերելու է կառուցվածը՝ լինի դա տուն թե եկեղեցի: Այդ համոզման արտահայտություններից մեկն էլ այն պատասխանն է, որ Արամը տալիս է թուրք փոխգնդապետի վերջնագրին. *«Շինեցեք մեր տները, եւ մենք կհանձնենք զորանոցը: Ձենքերը չենք տա. եկեք, առեք: Զինվորացու չունենք: Սպանվածին ծառայության չեն կանչում»* (էջ 207): Ի դեպ, թուրքերի կողմից ներկայացված վերջնագիրը, ըստ որի զեյթունցիները պետք է դատարկեին իրենց զբաղեցրած զորանոցը, հանձնեին զենքերը եւ զինվորագրվեին միլիական բանակին, եթե մի կողմից ապացույցն է այն բանի, որ Արամի ծրագրերն անիրագործելի մի բան էին, մյուս կողմից հաստատումն է այն ճշմարտության, որ օսմանցին բոլոր ժամանակներում հետամուտ է մի նպատակի՝ Թուրքիան տեսնել առանց այլազգիների, մանավանդ՝ առանց քրիստոնյաների:

Այդ նույն ողբերգական իրադարձություններն սկսում են փոխել նաեւ Փառենի նման *«ամուր կոճղին»*, նաեւ ֆիզիկապես. *«Այն, որ մախրենու վրա փոսիկներ են առաջանում, եւ կեղեւը փորձում է ծածկել փոսիկները, այն, որ արցունքի պես կաթում է խեժը եւ գնդիկի պես չորանում, այն, որ շերտավորվում է բնի վրա եւ դյուրավառ ճյուղ է դառնում, Փառենն է, հին կոճղը, հին մախրենին, որ մի ժամանակ շարժվում էր, տեղափոխվում հողի վրայով, ժայռից ժայռ, բարձունքից բարձունք: Այտերը փոս էին ընկել, աչքատակին առաջացել էին տոպրակիկներ. ծնոտը մազակալվել էր, ու մորուք էր աճում, շորերը պատառոտված էին, հնամաշ: ....Փարթամ ուսերի վրա ո՞վ էր դրել այն անտեսանելի ծանրությունը, որ ստիպում էր կքվել: ....Կարծես կայծակ էր խփել մախրենու կատարին»* (էջ 209):

Վերադարձի վճիռը ճի՞շտ համարել, մնալ ու շարունակե՞լ սերունդների կյանքը, թե՞ թողնել երկիրն ու հեռանալ՝ փրկելով այդ նույն սերունդների վաղվա կյանքի ընթացքը: Այս հարցը տարբեր ձեւակերպումներով վեպում հաճախ է արծարծվում: Ալաջաջյանի պատասխանը հստակ է. իրականությունն այն է, որ վերադարձել է կիլիկիահայության մի հատված, ուրեմն ճշմարիտը նրանք են: Խնդիրն այն է, թե ինչպես են նրանք շարունակելու գոյատեւել. Ալաջաջյանի պատասխանն այստեղ եւս հստակ է. *ձգտել խաղաղության եւ պատրաստ լինել անհավասար կռվի:*

Ո՞րն է ճշմարտությունը, եւ ո՞վ է իրավացի: Հարցեր, որ հաճախ են ծագում վեպն ընթերցելիս:

Կարող է թվալ, թե վերոհիշյալ ուղիները տարբեր են, անգամ՝ իրար հակասող: Իրականում դրանք նույն ժողովրդի դառը ճակատագրի հնարավոր երկու ընթացքներն են՝ մեկը մյուսով պայմանավորված, մեկը մյուսից բխող:

Հեղինակային ասելիքն էլ հենց այդ է. չկա ու չի կարող լինել խաղաղ կյանք, եթե պատրաստ չես զենքով այն պաշտպանելու. զենքը խաղաղության երաշխիքն է, խաղաղությունը՝ զենք ունենալու հնարավորություն:

Զենքի հարգը ճիշտ է պատկերացնում նաեւ Թագաճյան վարդապետը, որը երիտասարդության տարիներին քիչ կռիվներ չի մղել եւ այժմ, երբ տարիքն առել է, շարունակում է հավասարապես ծնրադրել իր հոգուց անբաժան երկու աստվածների՝ Քրիստոսի եւ փրկիչ զենքի առջեւ: Նրա մասին հեղինակը գրում է. *«....ճակատագրի ու աստծո դեմ սեւ մի ուրվական, որ գնում էր չգիտես ուր, մարդկանց հոգու սեւությունը պախարակելու»* (էջ 43):

Հանձին վարդապետի՝ Ալաջաջյանը կերտել է ազատ, արդար ու հավատավոր մարդու առինքնող կերպար: Վարդապետը մեծ նվիրում ունի առ քրիստոնեական հավատքը եւ նույնքան էլ *«արի արանց»* հայ մարդ է՝ փառավոր անցյալով. *«Սա այն վեղարավոր հերոսն է, որ ձի նստած արշավել է Բերդուս-չայի թշնամիների վրա, սա այն հերոսն է, որ այս զորանոցում ապաստանած թշնամի զորքերին գերեվարեց…»* (էջ 137):

Միեւնույն ժամանակ նա ժողովրդական ավանդույթների, ծեսերի ու տոների պահապանն է, որոնք նույնպես գոյատեւման կռվաններ են, ժողովրդին *ժողովուրդ* պահելու ուժ:

Համատարած անելանելիության ու դատապարտվածության մեջ Զեյթունի զորանոցում ու նրա շրջակա տներում ծվարած հազար չորս հարյուր հայերը ջանում են մոխրակույտերի մեջ կյանքի նշաններ դրսեւորել, սիրել ու սիրվել, ինչպես, օրինակ, Միքայելն ու Օսանը, Փոփոն ու Կատարինեն, ինչպես Տրդատը՝ իր նորածին մանկանը, ուրախանալ, ինչպես Թումասն իր թոռներով, ինչպես վարդապետը, ամենօրյա իրենց աղոթքը հնչեցնել, ունենալ իրենց տունը, իրենց հողում ծնվել ու այդ հարազատ հողում էլ թաղվել: Չէ՞ որ իրենցն էր Զեյթունը, ու իրենք էլ պատկանում էին Զեյթունին:

Ալաջաջյանն այդ ամենը խտացրել է բազում կռիվների բովով անցած Միքայելի կերպարում: Հոգով ու մարմնով վիրավոր Միքայելի՝ այս աշխարհում մեն-մենակ մնացած այդ մարդու, որ՝ *«Ծնողներ չուներ, սպանել էին: Քույր ու եղբայր չուներ, սպանել էին, ազգական ու բարեկամ չուներ, սպանել էին»* (էջ 63), եւ նրան խնամող այրի Օսանի միջեւ հյուսված սիրո մի պահի պատկերը վեպում հնչում է որպես խաղաղ կյանքի հիմն, արեւագալի ծնրադրում, սիրո նշխարի հավերժացում, գեղեցկության փառաբանում, բնական կյանքի շարունակում. *«Արեւը ներս ընկավ զորանոցի բակից, Օսանը՝ դռնից:* ➥ *էջ 6*

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՉԿԱՌՈՒՅՎԱԾ ԿՈՒՍԱՆՈՑԸ ԵՒ ԳԵՈՐԳ Դ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ ԿՐԵԴՈՆ



➥ *էջ 2*

Ակնհայտ է, որ Ալեքսանդրապոլը խոշոր հաշվով ընտրել էր օրիորդաց կանոնավոր դպրոցները եւ ոչ՝ «երեւակայական դպրութիւն խաւարապաշտ կանանց ձեռքում»: Թերեւս այսպես էլ փակվում է կուսանոցի կառուցման հարցը:

Նկատենք, որ 1866—1882 թվականներին հայրապետական գահին էր արդեն Գեւորգ Դ Կոստանդնապոլսեցի Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որն իր գործունեության առաջնահերթություններից էր համարում հայկական դպրոցների բարեկարգումը՝ չափազանց մեծ ուշադրություն դարձնելով նաեւ աղջիկների կրթությանը:

«Ազգի մը դաստիարակության կշիռը վարժարաններու վիճակեն կչափի, իսկ ազգի մը քաղաքակրթության ծանրաչափն աղջկանց վարժարաններն են: Այն ազգը, որ բարեկիրթ մայրեր ունի՝ բարերարներ, դյուցազունք, հայրենանվեր զավակներ ունի եւ վերջապես՝ ամեն ինչ ունի, իսկ այն ազգը, որ բարեկիրթ մայրեր չունի, դեռեւս բիրտ, բարբարոս եւ անկիրթ վիճակի մեջ է: Բարեկիրթ մայրերն ընկերությանց զարդն ու գեղեցիկ եւ վեհ առաքինությանց տիպարներ են, ուստի եւ առանց աղջկանց դաստիարակության արական սեռին դաստիարակությունը ոչ միայն իր բարձրությանը չհանգիր, այլ կիշխեմ ըսել, թե միակողմանի մարդոց կնմանի:

....Այս է իմ համոզումս, թե դաստիարակությունը, մանավանդ աղջկանց դաստիարակությունը, հայուն փրկությունն է»,— հայտարարում էր Գեւորգ Դ Կաթողիկոսը:

Այս առումով չափազանց ուշագրավ է նաեւ Գեւորգ Դ Կաթողիկոսի՝ 1882 թվականի մայիսի 23-ին՝ իր գահակալության 15-րդ տարեդարձի օրը, աջիամբույրի եկած միաբաններին ուղղած խոսքը, որ մեզ է փոխանցում թիֆլիսահայ «Արձագանք»-ը:

«Ի վաղուց անտի համոզված էի, որ մեր ազգի փրկությունը լուսավորության եւ կրթության մեջն է, ուստի կոչմանս առաջին իսկ օրից ուժիս մեծ մասը դորան եմ նվիրել, դպրոցներ հիմնել, հայերի մեջ լույս սփռել, այս է եղել իմ նշանաբանս: Մենք այսօր Ռուսաստանի մեջ ունինք 250-ից ավելի մեծ ու մանր դպրոցներ, ուր մեր զավակունքը կրոնի հետ մայրենի լեզուն են ուսանում, մեր տղայոց հետ այսօր հավասար գնում են աղջիկներն, եւ այդ ինձ համար ավելի նշանակություն ունի. իմ եկած օրը հայ աղջկանց դպրոցի վերա շատ սակավ հասկացողություն ունեին. Թիֆլիսում եւ Աստրախանում մի քանի կանայք փակված միանձնական ընկերություն էին կազմում, որոց ես ասացի, թե ինքնեանք անպտուղ ծառեր են, պտղատու այն աղջկունքն են լինելու, որք կարող պիտի լինին ավետարանի խոսքը հայոց պատմութեան հետ իրանց զավակներին ուսուցանելու»:

Այսպիսին էր Գեւորգ Դ Կաթողիկոսի լուսավորչական կրեդոն ազգի փրկության: Ալեքսանդրապոլում այդպես էլ չկառուցված կուսանոցի պատմությունը թերեւս կարելի է դիտարկել նաեւ այս համատեքստում:

Իսկ Ալեքսանդրապոլի կույսերի հետագա ճակատագրի մասին խոսում են Ազգային արխիվում պահվող եւս մի քանի վավերագրեր:

1893 թվականին Ալեքսանդրապոլի հոգեւոր կառավարությունը սրբազան սինոդին է ներկայացնում Գայանե Ղանդիլյանի եւ Շողակաթ Մատինյանի խնդիրը՝ Սբ Լուսավորիչ եկեղեցուց իրենց Սբ Նշան տեղափոխելու վերաբերյալ:

Խնդիրը մերժվում է, «որովհետեւ չիք յարմարութիւն»:

Եւս մեկ նամակ Շողակաթ Մատինյանից՝ ուղղված Էջմիածնի սբ սինոդին՝ 1911 հուլիսի 6-ի թվագրությամբ: Ալեքսանդրապոլում այդպես էլ չկայացած կուսանոցի վերջին մոհիկանը՝ արդեն ծերության հասած կույս Շողակաթ Մատինյանը, չունենալով որեւէ ազգական ու բարեկամ, խնդրում է իրեն ուղարկել Խծկոնից վանք, որտեղ, ինչպես նշում է ծեր կույսը, «սրբազան պարտականութիւնս կլինի աղօթել Մայր Աթոռոյ պայծառութեան եւ Սրբազան Ատենակալներուդ բազմարդիւն կենաց արեւշատութեան համար»:

Վերջում հավելենք, որ Կարսից ոչ հեռու 10-րդ դարի այս վանքն ամայացել է 1918-ին, իսկ հետագայում նաեւ ավերվել թուրքական իշխանությունների կողմից:

Արդյո՞ք վանքի ավերակներում է գտնվում նաեւ ալեքսանդրապոլցի կույսի աճյունը:

ՀԵՂԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

Նա հավատում է հայոց ոգու անշեջ կրակին...

Անվանի պատմաբան Էդ. Մինասյանի ծննդյան 65-ամյակի առթիվ

Սովորական կենսագրության տեր չէ պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետի դեկան Էդիկ Գարեգինի Մինասյանը՝ հայ պատմաբանների հեղինակավոր առաջատարը: Նրա տիտղոսները շատ են, ստացած մրցանակները, պատվոգրերը, շքանշանները՝ նույնպես: Այսօր իմ խոսքը ոչ միայն այդ ամենի մասին է, այլեւ Էդիկ Մինասյան հայորդու հոգեկան էության ու հոգեւոր կենսագրության:

Էդիկ Մինասյանն արմատներով սերում է Արեւմտյան Հայաստանից: Պատմական Խնուսում եւ Սասունում են ապրել նրա հայրական եւ մայրական գծով պապերը: Էրգրում նրանք հարուստ տունուտեղ, տնտեսություն են ստեղծել, այլեւ փառահեղ կենսագրություն կերտել: Նրա պապերն ակտիվ մասնակիցներն են եղել սուլթանական ռեժիմի դեմ հայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական զինյալ պայքարի:

Կալե ու Սիմոն պապերը, նրանց հարազատներն ու մերձավորները եղել են հայդուկային շարժման շարքերում, մարտնչել ու մաքառել Անդրանիկ զորավարի հրամանատարության ներքո:

Արեւմտահայաստանի սիգապանծ լեռներում ապրող Մինասյանների տոհմը հավերժ կապրեր հայրենի բնօրրանում, եթե չլինեին հայոց ջարդերն ու կոտորածները, եթե չլիներ 1915 թ. ցեղասպանությունը:

Հայոց մեծ արհավիրքից հետո Մինասյանների տոհմը, տալով զգալի կորուստներ, նոր հանգրվան է գտնում Արեւելյան Հայաստանում՝ բնակություն հաստատելով Արագած լեռան փեշերին՝ նոր կազմավորվող Թալինի շրջանում, որն իր բնակլիմայական պայմաններով շատ էր նման կորուսյալ Սասունին եւ Խնուսին:

Մինասյանների տոհմն Արագածի խստահայաց լանջին բարեբախտաբար նոր շիվեր տվեց, վերընձյուղվեց ու նոր թափով սաղարթ հագավ եւ խոր արմատներ նետեց: Գարեգին հայորդին այստեղ նոր ընտանիքի հիմքերը դրեց, ամուսնացավ իր երկրակից Լուսիկի հետ: Ծնվեցին վեց զավակները, տունը լցվեց անհուն երջանկությամբ:

Զավակներից յուրաքանչյուրը գտավ իր ուղին եւ արահետը այս կյանքում: Սակայն բոլորը միասին հայրենիքի արժանավոր զավակներ դարձան:

Էդիկ Մինասյանը գերազանցությամբ ավարտեց հայրենի գյուղի՝ Ոսկեթասի միջնակարգ դպրոցը եւ ուսումնառությունը շարունակեց ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետում, որն էլ նույնպես գերազանցությամբ ավարտեց:

Երդվեց անմնացորդ, առանց վարանումների ու սակարկումների ծառայել եղեռնազարկ իր ժողովրդին, ավերակներից փյունիկի նման վեր հառնող նահիրյան երկրին:

Եվ խորունկ հայրենասիրությունը նրա երակներում հոսեց որպես Խնուսի եւ Սասնա տան իր նահապետներից եկող դաս ու պատգամ, պատվիրան եւ երդում:

Իր գիտակցական ողջ կյանքի ընթացքում նա հավատարիմ է մնացել էրգրի ճշմարիտ զավակի իր անբեկանելի էությանն ու կոչմանը եւ անշահադետ ծառայել հայ դատին նվիրված սերունդներ կրթելու առաքելությանը:

1979 թվականին գերազանցությամբ ավարտել է ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետը: Սկսած ուսանողական տարիներից մինչ ցայսօր նրա գործունեությունն անընդհատ ու անընդմեջ կապված է ԵՊՀ-ի՝ հանրապետության թիվ 1 բարձրագույն ուսումնական հաստատության հետ: Մայր բուհում նա վարել ու վարում է պատասխանատու պաշտոններ: 1985 թ. պաշտպանել է թեկնածուական, 2003-ին՝ դոկտորական ատենախոսությունները: Նույն հաջողությամբ ստացել է գիտական կոչումները. 1991 թ. դարձել է դոցենտ, իսկ 2005 թ.՝ պրոֆեսոր:

2009-ից մինչեւ օրս Էդ. Մինասյանը հաջողությամբ կատարում է ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետի դեկանի պարտականությունները: Երկար տարիներ նա վարում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նախագահի տեղակալի պաշտոնը:

Բուռն ու բերքառատ է Էդ. Մինասյանի շուրջ 40-ամյա գիտական գործունեությունը: Այդ ընթացքում նա ընթերցողի դատին է ներկայացրել մեկ տասնյակից ավելի ծավալուն մենագրություններ եւ երկու հարյուրից ավելի գիտական հոդվածներ:

Հարուստ եւ բազմազան է նրա հետաքրքրությունների շրջանակը, որն ընդգրկում է հայ դիվանագիտության պատմությունը, հայոց պատմության նորագույն շրջանը, հայրենիք—սփյուռք առնչությունները, 19-րդ դարավերջի հայկական ազատամարտը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը, արցախյան ազգային-ազատագրական պայքարը:

Նրան մեծ հռչակ բերեցին կոթողային մի շարք աշխատություններ՝ «Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի հանրապետությունում 1999—2003 թթ.», «Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն», «Հայոց նորագույն պետականության քառորդ դարը», «Հայ կանայք 19-րդ դարավերջի եւ 20-րդ դարասկզբի հերոսամարտի տարիներին», «Հայ հերոսուհի կանայք», «Մայրաքաղաք Երեւանը ՀՀ անկախության տարիներին (1991—2018 թթ.)»: ➥ *էջ 5*

Երգի հավերժող թևերով

Ալագյազ բարձր սարին
Ձունն իջեր է կատարին.
Առնեմ էլնեմ, առնեմ էլնեմ,
Առնեմ էլնեմ Ալագյազ,
Ուտեմ ձունդ, խմեմ ջուրդ,
Լանջիդ ման գամ, Ալագյազ...

Դրա ծննդավայրն Արագած լեռան ուրցաբույր փեշերին փռված Մուլքի գյուղն է՝ զով ամառանոցներով ու սառնորակ աղբյուրներով, բարի, աշխատասեր մարդկանցով ու բերրի անդաստաններով հայտնի Ապարանի գյուղերից մեկը: Եվ ամեն անգամ, երբ Հին Նորքում գտնվող իր տնից քաղաք էր իջնում, Ապարանի հող ու ջրի գովքն անող այս երգն էր շուրթերին, հոգում՝ հայրենի եզերքի հանդեպ սերն ու կարոտը:

Այդպիսին էր ժողովրդական երգասաց Իշխան Կարապետյանը՝ ժողովրդական երգարվեստի սիրահարների սիրելի ու հարազատ Իշխան հայրիկը:

Մասնագիտությամբ հաշվապահ էր, ողջ կյանքը նվիրել էր իր բազմանդամ գերդաստանին, մասնակցել էր նաեւ Երկրորդ աշխարհամարտին: Եվ ողջ կյանքում, անգամ պատերազմի դաժան օրերին, նրան ուժ ու հույս էին ներշնչել հայրենի երգերը, նրանցով մտովի այցելել էր ծննդավայր, հարազատներին ու ընկերներին, ժամի աղբյուրի սառնորակ ջրի փոխարեն իր մշեցի եւ ալաշկերտցի նախնիներից ժառանգած երգերով էր հագեցրել հայրենաբաղձության ծարավը:

Երգասեր եւ երգապահպան է Ապարանի ժողովուրդը, եւ բազմաթիվ ապարանցի երգասացներ են հայտնի, սակայն ոչ միայն իմացած երգերի քանակով, ազգագրական տվյալ շրջանին բնորոշ անխառն երգառճով, այլեւ մեղեդիների մատուցման յուրօրինակ երանգախաղերով առանձնանում էր Իշխան Կարապետյանը: Տարոնից եկած երգերից՝ «Շուշո», «Բատալա», «Դարդո», «Չոլի կռունկ», «Առաքել, Մուշեղ», հարսանեկան հնագույն թագվորագովքեր, Ապարանում ստեղծված երգերից՝ «Օսան յար» ու «Փշատի ծառ», «Էլինո յար» ու «Կաքավը թռավ», «Յաման յար» ու «Մարալ Եվա ջան», բազմաթիվ գուսանական երգեր... Այս երգերով 1960-ական թվականներից Իշխան Կարապետյանը ճանաչում էր ձեռք բերել ոչ միայն հայրենի Ապարանում, այլեւ ողջ հանրապետությունում: Նրա ձայնը տարիներ շարունակ հնչում էր տարբեր հեռուստատեսային եւ ռադիոհաղորդումներում, անգամ ժամանակին նրա ստեղծագործություններից մշակվել եւ իր կատարմամբ ձայնագրվել են Հայաստանի ռադիոյի եւ հեռուստատեսության Ա. Մերանգուլյանի անվան ժողգործիքների համույթում.

Սեգ սարերից հոսող ջրեր,
Ո՞ր խորքերից եք գալիս,
Ունեմ անթիվ, ծով կարոտներ,
Մեկից ինձ լուր չեք տալիս:

Սեգ սարերում երգող տատրակ,
Ո՞ր քարափից ես գալիս,
Ո՞ւր ես թռչում այդպես արագ,
Սիրտս արյուն է լալիս...

Երգասաց Իշխան Կարապետյանը ոչ միայն երգիչ էր, այլեւ ստեղծագործող: Երգեր էր հորինում տարբեր առիթներով՝ լիներ Մեծ եղեռնի հուշարձանի բացման հուզիչ արարողությունը, հերթական հանդիպումը ծննդավայրի ու ընկերների հետ թե իր կյանքի երկարամյա ընկերուհու՝ տիկին Հայաստանի կողմից ամուսնական մատանին կորցնելու զավեշտախառն պատմությունը:

Իշխան հայրիկը իմացած երգերի մեջ մի առանձին գորովանքով էր վերաբերվում իր հայրենակից գուսան Մահուբի Գեւորգի երգերին: Հայրենակիցների անսահման սերն ու հարգանքը վայելող գուսանն ապրել եւ ստեղծագործել է Ապարանի Երնջատափ գյուղում եւ իր հորինած բազմաթիվ խրատական, հայրենասիրական երգերով հաճախ հանդես եկել հարազատ վայրերում, իսկ Կարապետյանների երգասեր ընտանիքը սերտ կապեր է ունեցել սիրված գուսանի հետ: Իշխան հայրիկը շատ վաղ հասակում իր հայրական տանն առիթներ էր ունեցել լսելու Մահուբի Գեւորգին եւ անգամ հիշում էր գուսանի՝ իր հորը՝ Մելիք Կարապետյանին նվիրած երգ-կատակից պատառիկներ...

Իշխան Կարապետյանը նաեւ զբաղվում էր հայրենի երգերի տարածման շնորհակալ գործով: Նա Երեւանի ժողովրդական ստեղծագործության տան ինքնուս ստեղծագործողների բաժանմունքի նախագահն էր, Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտում կազմակերպվող ժողովրդական ստեղծագործության ամենամյա փառատոնի պատվավոր հյուրը:

Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնը տասնամյակներ շարունակ անդրադառնում է հայ ազգագրական երգարվեստի նմուշների հրատարակման օգտավետ գործին: Իսկ երաժշտագիտության թեկնածու, կոնսերվատորիայի երկարամյա դասախոս եւ ամբիոնի նախկին վարիչ Ալինա Փահլեւանյանը, լինելով Իշխան Կարապետյանի երգերի հրաշալի գիտակ, վաղուց էր ձեռնամուխ եղել նրա երգերի ժողովածուի ստեղծման եւ հրատարակման գործին, սակայն հայտնի պատճառներով այն հետաձգվել էր:

Սակայն տարիներ անց, երբ արդեն ցավալիորեն վաղուց մեզ հետ չէ Իշխան Կարապետյանը, նրա երգերը հավերժ մնալու են որպես հայ երգի կատարողների եւ երաժշտասերների սեփականություն. երաժշտագետ Ալինա Փահլեւանյանն իրագործել է իր վաղեմի ծրագիրը:

Ընթերցողի սեղանին է տպագրական բարձր որակով եւ ճաշակով հրատարակված «Հայ ժողովրդական երգեր եւ նվագներ» մատենաշարի 15-րդ հատորը, որն ամփոփում է Իշխան Կարապետյանի ձայնից Ալինա Փահլեւանյանի վերծանած, կազմած եւ խմբագրած «Թանկագին ավանդ» ժողովածուն: Այն ներառում է երգասացից գրառված 82 երգ՝ պարերգեր, ծիսական երգեր, կատակերգեր, սիրային-քնարական երգեր, պատմական-հայրենասիրական երգեր, գուսանական երգեր (որոնց թվում՝ մեկական երգ Ջիվանուց, Շերամից եւ Պայծառեից, իսկ Մահուբի Գեւորգից՝ ամբողջ մի թանկ ժառանգություն՝ 18 երգ):

«Իշխան Կարապետյանը ժողովրդական երգի իսկական կրող էր, ճաշակով կատարող: Օժտված էր նուրբ երանգներով հարուստ ձայնով: Բայց ամենակարեւորը՝ երգը նրա տարերքն էր,— նախաբանում գրում է Ալինա Փահլեւանյանը:— Նրա վաստակը հայ ժողովրդական երգարվեստի կատարողական ավանդույթների պահպանման բնագավառում անուրանալի է»:

Գիրքը հրատարակվել է կազմողի միջոցներով եւ նվիրված է Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հայ երաժշտական ֆոլկլորագիտության կաբինետի հիմնադրման 50-ամյակին:

Արտակ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

Հերոսների դրամատիկ հոգեվիճակները «Գեւորգ Մարզպետունի» վեպում

Մեր նախորդ հոդվածում («Գեւորգ Մարզպետունի» պատմավեպը եւ պատմական աղբյուրները, *ՔՀ, 2022 թ., թիվ 2–3*) արդեն խոսել ենք այն մասին, որ Մուրացանը պատմական թեման մշակելիս առաջնորդվել է ռուս քննադատ Բելինսկու տեսական սկզբունքներով՝ համարելով, որ պատմությունը ստեղծագործության հիմքն է միայն, որ գրողն ազատ է վերակերտելու պատմությունը՝ իր գաղափարներն արտահայտելու համար: Գրողը թեեւ հավատարիմ է մնում պատմական դեպքերի ժամանակագրությանը, սակայն պատմությունը հաճախ հարմարեցնում է իր ստեղծագործությանը:

Մուրացանը պատմական դեպքերը դիտարկում է իր հերոսների ապրումների հետ համատեղ, ինչն էլ հաճախ հանգեցնում է սուբյեկտիվիզմի:

Վեպում հայրենասիրության տիրակալ գաղափարաբանությանը ենթակա համարյա բոլոր հերոսները ճակատագրով դատապարտված են ինչ-ինչ բարդ իրավիճակներում ուժ չգտնել հաղթահարելու իրենց հզոր անձնականության նույնքան հզոր դիմադրությունը (*տես Սաֆարյան Վ., Գրողի եւ կերպարի անհատականությունը, Երեւան, 2001, էջ 132*): Այս առումով «Գեւորգ Մարզպետունի» վեպը հայ պատմավեպերից ամենահոգեբանականն է. նրանում գաղափարական ու հոգեբանական շերտերը գտնվում են ներդաշնակ համամասնության մեջ: Գրողի գեղարվեստական մտածողության այս հատկանիշը նրա գրական ժառանգությունն ուսումնասիրողների կողմից մեծ ուշադրության է արժանացել: Այս առիթով Ա. Տերտերյանը գրում է. «Մուրացանը ոչ միայն տիպ է տալիս, այլեւ շեշտում է այդ տիպի հոգեկան որոշ առանձնահատկությունները, եւ այդ շեշտուն, բնորոշ գծի շուրջն է հավաքում այն բոլորին, ինչ որ գովելի կամ համակրելի, կամ թե չէ՝ անդուրեկան եւ հակակրական են այնպես իրեն իբրեւ գեղագետի» (*Տերտերյան Ա., Մուրացան, Երեւան, 1971, էջ 52*):

Ինչպես որ Մուրացանն ինքն է իր նամակներում անընդհատ ինքնավերլուծողգնահատող, այնպես էլ նրա հերոսներն են անընդհատ վերլուծություններ անում, վերագնահատում անցյալը: Այս ինքնավերլուծական փաստն ապահովում է վեպի

հոգեբանական գերակայությունը: Եվ դա այնքան ինքնաբուխ է, որ նույնիսկ ավելորդ են թվում հեղինակային այնպիսի միջամտությունները, որոնցով նա փորձում է ներկայացնել հերոսների հոգեվիճակը (*տես Սաֆարյան Վ., նշվ. աշխ., էջ 142*):

Ռոմանտիկ Մուրացանի համար առաջնայինը միշտ եղել է գաղափարատիպ հերոսների ստեղծումը. գրողը գտնում էր, որ մարդկանց անձնական վարքը կարող է ճակատագրական լինել հասարակության եւ հայրենիքի համար, ուստի մարդկային բոլոր դրսեւորումները պիտի ենթարկվեն բարձր գաղափարին: Այս պատճառով էլ նա ազատ է վարվել վեպի պատմական կերպարների հետ՝ հաճախ բավականաչափ հեռանալով պատմական աղբյուրներից:

Վեպի հերոսները, ունենալով մի նպատակ եւ այդ նպատակի իրագործման մղվածություն, այնուամենայնիվ, դեպքերի զարգացման տարբեր հանգամանքներում կարող են անսպասելիորեն փոխվել, որովհետեւ փոխվում է ոչ միայն իրավիճակը, այլեւ հերոսի վերաբերմունքը տվյալ իրավիճակում: Հենց այս պահերին էլ առաջանում են հոգեբանական նոր երանգներ: Նրանք միշտ չէ, որ կարողանում են առաջնորդվել բանականությամբ, քանի որ նրանց մեջ ապրում է սեփական ազատության գիտակցությունը:

Վեպում ներկայացվում է, թե ինչպես է շրջապատը ներազդում հերոսների վրա, ներթափանցում նրանց հոգեկան աշխարհ, ինչպես են հերոսները ներգործում այդ արտաքին աշխարհի վրա: Վեպի հոգեբանական շարժումը պայմանավորող Սահականույշ–Աշոտ, Մարզպետունի–Սեւադա, Մարզպետունի – Ցլիկ Ամրամ, Մարզպետունի – Աշոտ Երկաթ, Մարզպետունի–Սահականույշ փոխհարաբերությունները սովորական առնչություններ չեն, այլ իրենցից ներկայացնում են տարբեր սկզբունքների պայքար, որը բացում է հերոսների աչքերը, ստիպում ավելի սթափ նայել աշխարհին: Այս առիթով Վ. Սաֆարյանը նկատում է. «Պատումի քննության այս ձեւը, որպես կանոն, վերածվում է դատի, երբեմն՝ ինքնադատության, քանի որ իսկապես առկա են մեղադրող եւ պաշտպանող կողմերը, մեղադրական փաստերը, անգամ՝ դատական եզրակացությունը» (*նույն տեղում, էջ 158*):

Իր դատողությունների ճկունությամբ եւ մտածողությամբ հերոսներից յուրաքանչյուրն ամբողջական է իր տարերքի մեջ եւ հոգեբանական դրությունը վերապրում է զգացմունքների ամբողջ ուժով ու ծայրահեղ սրությամբ: Նրանք ինչ-որ տեղ մեղանչում են գերագույն ճշմարտության դեմ, սակայն ելնում են մեկ այլ ճշմարտությունից, որը նույնպես հզոր է: Ահա թե ինչու հերոսները համոզում են իրենց վարքով եւ գտնում են իրենց արդարացումը (*տես Սարինյան Ս., նշվ. աշխ., էջ 135*):

Մուրացանը հայրենասիրության գաղափարը փորձում էր հայտնաբերել մարդկային-հոգեբանական բարդ հանգույցներում՝ իբրեւ սկիզբ ընդունելով մարդու ներքին աշխարհը:

Վեպում հերոսները կանգնած են մեծ խնդրի առաջ. վճռվում է հայրենիքի բախտը: Նրանց ներաշխարհում տեղի է ունենում ուրույն պայքար, որովհետեւ անձնական շահերը որոշ իմաստով բախվում են հասարակական շահերին: Վեպում հոգեկան այդպիսի դրամա են ապրում Աշոտ Երկաթը, Սահականույշը, Ցլիկ Ամրամը, Սահակ Սեւադան, Հովհաննես կաթողիկոսը, Աբաս արքաեղբայրը: Միայն Գեւորգ Մարզպետունին չունի հոգեկան այդ դրաման. նա բարձր է կանգնում բոլորից եւ անձնվիրաբար պայքարում ժողովրդի ազատության համար:

Աշոտ Երկաթի հոգեկան դրաման

Պարտականության ու սիրո միջեւ
Այդ ես եմ տնկված՝
Ուղեփակոցի գերանի նման...
(Պարույր Սեւակ,
«Այսպես չեն սիրում»)

Վեպի կենտրոնական կերպարներից է Աշոտ Երկաթը՝ հասարակական ու անձնական զգացմունքների դրամայով: Մուրացանն ազատ է վարվել պատմական Աշոտ Երկաթի կերպարն ստեղծելիս: Դրասխանակերտցին նշում է, որ արքան շատ էր լինում Ուտյաց աշխարհում եւ ուներ «բարոյական թերություն»: Այս թեթեւ ակնարկները Մուրացանի գրչի տակ ընդարձակվել են, դարձել վեպի ծանրակշիռ հանգույցներից մեկը:

Որքան էլ որ Մուրացանը հրաշալի գիտեր, որ նա հայոց պատմության մեջ եղել է հզոր արքա, որի օրոք խաղաղության տեւական շրջան հաստատվեց Հայաստանում, այնուամենայնիվ, Աշոտ Երկաթը չէր կարող լինել գրողի գաղափարակիրը, եւ պատճառը պայմանավորված է Մուրացանի հասարակական հայացքներով: Ինչպես եւ արդեն նշել ենք, Մուրացանն ազգության հիմքը, բացի անձնազոհ անհատից ու եկեղեցուց, համարում էր նաեւ օրինավոր ընտանիքը: Գեւորգ Մարզպետունու բերանով գրողը հաստատում է ազգության հիմք հանդիսացող ընտանիքի կարեւորությունը. «Ազգերի զորությունն ընտանիքի մեջ է. զորավոր է այն ազգը, որ ունի զորավոր ընտանիքներ, սիրով, միությամբ, առաքինի եւ հավատարիմ կենակցությամբ ընտանիքներ: Այն գեղջուկ խրճիթները, այն աննշան տնակները, որոնց մեջ ապրում են ցնցոտիներով ծածկված մանկտիք, եւ որոնց շատ անգամ արհամարհում են մեծամեծ իշխանները, նույնիսկ դրանք են, որ ամփոփում են իրանց մեջ հայրենիքի ուժը» (*Մուրացան, «Գեւորգ Մարզպետունի», Երեւան, 1977, էջ 463)*:

Ահա հենց այս հանգամանքով է պայմանավորված այն փաստը, որ Աշոտ Երկաթը չէր կարող լինել Մուրացանի գաղափարատիպ հերոսը, քանի որ նա խախտել էր այն սրբազան ուխտը, որը տվել էր կողակցին ամուսնության օրը: Արքան ուներ «բարոյական թուլություն», որը գրողը այդպես էլ չի կարողանում ներել նրան, քանի որ գտնում էր, որ իշխող մարդկանց անձնական վարքը կարող է ճակատագրական լինել հայրենիքի համար: ➥ *էջ 7, 8*

Նա հավատում է հայոց ոգու անշեջ կրակին...

➥ *էջ 4*

Կատարած գիտական եւ մանկավարժական վիթխարի աշխատանքին զուգահեռ էդ. Մինասյանը վերջին տասնամյակներում ծավալել է ազգային-հասարակական նույնքան ծանրաբեռ ու վաստակաշատ գործունեություն:

Որպես հայ պատմաբան եւ հասարակական-քաղաքական գործիչ՝ նա իր նպաստն է բերել արցախյան հիմնահարցի հայանպաստ արծարծումներին, այդ առումով եւս հանրությանն է ներկայացրել կարեւոր զեկուցումներ եւ ուսումնասիրություններ: Գործնական առումով եւս ակտիվ շփումներ է ունեցել մարտնչող Արցախի պատասխանատուների եւ ժողովրդական զանգվածների, նաեւ զինված ուժերի ղեկավարության հետ:

Հայ պատմաբանը հայալեզու եւ օտարալեզու մամուլում արժանի հակահարված է տվել ադրբեջանական «պատմաշինարարների» ամենուր տարածվող հերյուրանքներին:

Էդիկ Մինասյան բաձր հայորդին մտավոր եւ հոգեկան ողջ ներուժով Հայ դատի զինվորն ու զորականն է միաժամանակ: Իր կազմակերպչական հմտություններն ու ստեղծագործական էներգիան նպատակադրում է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի կարեւորմանն ու խորացմանը: Սույն թեմատիկայով նա հանդես է եկել հանրապետական եւ միջազգային բազմաթիվ գիտաժողովներում եւ հավաքներում, խոսք ասել հեռուստատեսային եւ ռադիոեթերներից: Հանուն հայ ժողովրդի պատմականորեն անժամանցելի իրավունքների ճանաչման՝ նա օգտագործում է ամեն մի ամբիոն եւ առիթ՝ սույն օրակարգը միջազգային հարթակում գործածելու համար: Նրա խորին համոզումով՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը պետք է լինի անկասելի, եւ ցանկացած հանգամանքում բացառված են լինելու վերոնշյալ հարցի անտեսումն ու մոռացության մատնումը: Որպես հանրային գործիչ՝ էդ. Մինասյանը երկար տարիներ ղեկավարում է իր իսկ հիմնադրած «Խնուս» հայրենակցական միության հոգաբարձուների խորհուրդը: Մի քանի անգամ ընտրվել է մեր երկրի ամենաազդեցիկ՝ «Երկրապահ» կամավորական միության վարչության անդամ, որում գործուն մասնակցություն եւ աջակցություն է ցույց տվել միության աշխատանքներին: Պետք է արձանագրել, որ անվանի պատմաբանը հանդիսացել է նաեւ ՀՀ հանրային խորհրդի անդամ եւ աչքի ընկել իրեն բնորոշ եռանդով եւ ակտիվությամբ, հանդես եկել հասարակական բազմաբնույթ նախաձեռնություններով:

Էդիկ Մինասյան...

Շուրջ չորս տասնամյակ շարունակ հայոց պատմության ոգին ու խորհուրդը, դասերն ու պատգամներն է հաղորդում իրար հաջորդող ուսանողական սերունդներին:

Նրա դասախոսություններն ու ելույթներն աչքի են ընկնում բնականորեն գեղեցիկ, ճոխ հայերենով, համոզիչ ու կուռ տրամաբանությամբ, այնպիսի պաթոսով ու հանդիսավորությամբ, որ ներկաներին թվում է, թե նա պատմական վերոնշյալ իրադարձությունների անմիջական ականատեսն ու մասնակից է միաժամանակ:

Եվ երբ նա ուսանողական լսարանի առջեւ ոգեշունչ պատկերավորությամբ ներկայացնում է Վարդանանց ժամանակաշրջանը, կլանված ունկնդիրն այն պատրանքն է ունենում, թե հայ պատմաբանը հենց նոր վերադարձավ 451 թվականի հերոսաշունչ իրադարձություններից, Տղմուտ գետի ափերից, Ավարայրի դաշտից:

Նույնն է կատարվում, երբ նա իրեն հատուկ ոգով ու ոճով ներկայացնում է հայոց պատմության այլ դարերի դեպքերն ու իրադարձությունները:

Էդիկ Մինասյան հայորդին բնավ չի բավարարվում մատաղ սերնդին տեսական գիտելիքներ հաղորդելով: Նա յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտից հետո ուսանողների, մտերիմների ու զինակիցների խմբով ուխտագնացություն է կատարում դեպի Արեւմտյան Հայաստան, Կիլիկիա ու պատմական Պարսահայք: Ոտքով շրջելով պատմական Հայաստանի նշանավոր ու տեսարժան վայրերում՝ պատմաբանը գործնական հայրենասիրության բորբոքուն լիցքեր է հաղորդում հայ պատանիներին ու երիտասարդներին: Անցած տարիներին նա հարյուրավոր ուսանողների ուղեկցել է հայոց նվիրական բնակատեղիներում, կանգ առել Տղմուտ գետի ափերին, Ավարայրի դաշտում եւ այնտեղ հայրենաշունչ դաս վարել, որն իր կյանքի եւ երկարամյա դասախոսական գործունեության, թերեւս, ամենակարեւոր ու հրաշունչ դասն ու պատգամախոսությունն է եղել:

Էդիկ Մինասյան հայորդին անվարան հավատում է իր ժողովրդի ոգու անշեջ կրակին:

Նա հավատացած եւ համոզված է, որ կգա օրը, եւ կսկսվի մեր ժողովրդի հավաքական տունդարձը դեպի պապենական ու պատմական հայրենիք:

Հանուն այդ հայրենանվեր նպատակի ու երազանքի է ապրում, գործում ու արարում: Նրա միտքն ու ոգին ամեն օր սավառնում են իր պապենական կորուսյալ հայրենիքի սրբազան վայրերում, որի հոգեղեն մասունքները երկյուղածությամբ պահում է իր հոգում:

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Տյառնընդառաջը կերպարվեստում

Չորրորդ դարից ի վեր, երբ սահմանվեց Տյառընդառաջի տոնը, սկզբում մանրանկարչության, ապա հաստոցային գեղանկարում, ի շարս ավետարանական այլ թեմաների ու պատումների, մեծ տեղ գտավ նաեւ տյառնընդառաջի թեման: Սակայն մինչ կերպարվեստին անցնելը կցանկանայինք անդրադառնալ տոնի խորհրդին եւ տոնի պատմությանն առնչվող խորհրդանշական մի թվի:

Սուրբ Ծննդից 40 օր հետո, համաձայն Մովսիսական օրենքի (ուր ասվում էր, թե *«Ամեն արու զավակ, որ արգանդ է բացում* (այսինքն՝ առաջնեկը), *Տիրոջ համար սուրբ պիտի կոչվի»* (Ղուկ. Բ 23)), մանուկ Հիսուսին ծնողները տանում են երուսաղեմյան Տաճար՝ Աստծուն ներկայացնելու համար: Ըստ նույն օրենքի՝ ծննդաբերությունից հետո կանայք որոշ ժամանակ համարվում էին անմաքուր: Եթե նորածինը տղա էր, ապա մաքրության համար սահմանված էր 40, իսկ եթե աղջիկ՝ 80 օր, այսինքն՝ երկու 40 օր: Այս օրերը լրանալուց հետո նորածնի ծնողները գնում էին Տաճար՝ իրենց հետ տանելով մեկ տարեկան գառ, մի զույգ աղավնի կամ տատրակ՝ մեկը ողջակիզման, իսկ մյուսը՝ մեղքերի քավության համար: Աղքատ ընտանիքները, ինչպիսին Հիսուսի ընտանիքն էր, կարող էին ընծայաբերել երկու տատրակ կամ աղավնու երկու ձագ (Ղեւտ., ԺԲ):

Այստեղ ուզում ենք անդրադառնալ Աստվածաշնչում շուրջ 150 անգամ հանդիպող 40 թվին:

Աստվածաշունչն ուսումնասիրողներից ոչ մեկն այս թվի նշանակության հետ կապված հավաստի ու համապարփակ պատասխան չի տալիս: Սակայն եթե ուշադիր հետեւելու լինենք այս թվի կիրառումներին, ապա կտեսնենք, որ այդ թիվը, առավելապես ծիսական արարողակարգերում, առկա է համարյա բոլոր հին ժողովուրդների շրջանում, հիմնական կրոններում՝ հինդուիզմում, բուդդիզմում, քրիստոնեության մեջ, իսլամում:

Դեռեւս բաբելոնյան աստղաբաններն այն կապել են բնական համաաղետների՝ փոթորիկների, նավաբեկության հետ, մանավանդ երբ նկատում էին, որ աստղաբույլերն անհետացել էին տեսադաշտից: Այս թիվը կիրառվել է նաեւ համաճարակների ժամանակ, եւ պատահական չէ, որ 14-րդ դարում Մարսելում՝ Ֆրանսիայի խոշորագույն նավահանգստյան այդ քաղաքում, կյանքի կոչվեց 40-օրյա կարանտինը (ծագում է իտալերեն quaranta բառից, որն ուղղակի նշանակում է 40) այն նավերի համար, որոնք ժամանել էին երկրներից, որտեղ համաճարակ կար:

Եվ քանի որ 40 թվի հետ կապված խորհրդաբանական համապարփակ բացատրություն հնարավոր չեղավ գտնել, ուստի ճիշտ կլինի ընդունել, որ այն հիմնականում կապվում է Աստծու իրավասությունների հետ, որոնք կարող են մարդուն անըմբռնելի ու անքննելի լինել, թեպետ չի բացառվում նաեւ, որ այս թվի գաղտնիքը հայտնի է եղել մարդկության հեռավոր նախնիներին, որի բուն իմաստը հետագայում ստվերվել եւ կամ մոռացության է մատնվել: Միայն կարող ենք ասել, որ այսօր գիտությունն ապացուցում է, որ հղիությունից 40 օր հետո է ձեւավորվում սաղմը, ծնվելուց 40 օր հետո է նորածինն սկսում ընկալել շրջապատը, այսինքն՝ նախկին անիմանալի կյանքից տեղափոխվում նոր՝ իմացական կյանք: Դարեր շարունակ մեր ժողովուրդը, ինչպես նաեւ քրիստոնյա այլ ժողովուրդներ եւս սովորություն են ունեցել երեխային քառասունքից հանելու, հանգուցյալի քառասունքը նշելու (ասում են՝ իբրեւ մահացածի հոգին 40 օր դեռեւս մնում է երկրի վրա, որոշ ուսումնասիրողներն էլ պնդում են, որ 40 օր հանգուցյալի մազերը, եղունգները շարունակում են աճել եւ այլն):

Այս խորհրդավոր 40-ին առաջին անգամ հանդիպում ենք Ծննդոց գրքում, երբ խոսվում է մեծ ջրհեղեղի մասին. *«Երկրի վրա անձրեւ թափվեց 40 օր ու 40 գիշեր»* (Է 12):

Ապա՝ երբ Մովսեսը սպանեց եգիպտացուն եւ փախավ Մադիամի երկիր, այնտեղ մնաց 40 տարի (Գործք Է 30):



Գործ՝ Ջովաննի Բելլինիի

Մովսեսն Աստծուց օրենքի ու պատվիրանների տախտակն ստանալու համար 40 տարի մնաց Սինա լեռան վրա. *«Մովսեսը մտավ ամպերի մեջ եւ բարձրացավ լեռը: Մովսեսը լեռան վրա մնած 40 օր ու 40 գիշեր»* (Ելք ԻԴ 18):

Բ Օրենքի Թ 18-ում Մովսեսն ասում է. *«Առաջինի նման երկրորդ անգամ 40 օր ու 40 գիշեր Տիրոջ առջեւ աղաչեցի, հաց չկերա, ջուր չխմեցի ձեր գործած բոլոր մեղքերի քավության համար»*:

Կրկին Երկրորդ Օրենքում հանդիպում ենք. *«Եթե մեղավորը գանահարության է արժանի... ապա նրան թող գանահարեն ըստ նրա մեղավորության. 40 հարված, բայց ոչ ավելի»* (ԻԵ 2–3): Երկրորդ Օրենքից տեղեկանում ենք նաեւ, որ հրեաներն անապատում անցկացրին փորձության ու հնազանդության 40 տարի, եւ Տիրոջ հրեշտակն էլ նրանց հիշեցրեց. *«Նա տանջեց քեզ, սովահար արեց, կերակրեց քեզ մանանայով, որին ծանոթ չէիր, եւ որին ծանոթ չէին նաեւ քո հայրերը, որպեսզի քեզ ցույց տա, թե մարդը միայն հացով չէ, որ ապրում է, այլ մարդն ապրում է նաեւ այն ամեն խոսքով, որ ելնում է Աստծո բերանից: Քո զգեստները չմաշվեցին, քո ոտքերը 40 տարի կոշտուկներով չպատվեցին»* (Ը 3–4):

Տերը խոսեց Մովսեսի հետ եւ ասաց. *«Մարդիկ ուղարկիր, որ հետախուզեն Քանանացիների երկիրը: Դա ես իսրայելցիներին եմ տալու որպես կալվածք... Իսրայելցիները, երկիրը 40 օր հետախուզելուց հետո, վերադարձան»* (Թվեր ԺԳ 2, 26):

➥ էջ 8

ԵՐԲ ԵՂԵՌՆԵՐԸ ԿԱՆԳՈՒՆ ԵՆ

➥ էջ 3

Միքայելի վիրավոր ուսն այլեւս չէր ցավում...

Օսանը մոտեցավ, նշխարի մի մասունք տվեց: ....

— Գրկիր ինձ, Օսան, նստեմ, կանգնեմ, դիտեմ արեւագալը:

Օսանը կռացավ, թեւը նետեց Միքայելի մեջքին եւ ինչ-որ ուժ այն մագնիսեց տեղում: Վզի տակ, այտերի վրա, մազերի մեջ Միքայելի շուրթերն էին, շրջող շուրթերը: .... Հետո չիմացավ, թե ինչու ինքը կիսամերկ պառկած է Միքայելի կողքին ու փափլիկ, ճերմակ ուսերը դուրս են մնացել վերմակից, երբ Միքայելը ավելի ու ավելի է սեղմվում իրեն, եւ ինքը՝ Միքայելին: Բայց ինքը սեղմվում էր վախից, աշխարհն է ներշնչել, մենակությունից, որ կյանքն է պարտադրել, եւ առնական թեւերի կարոտից, որ այրիությունն է պատճառել: ....Գեղեցիկ էր Օսանը, շատ գեղեցիկ...» (էջ 55–56):

Միքայելի եւ Օսանի հարաբերություններով թեւ *«անտեսվում»* է Զեյթունում ընդունված *«պատվո օրենքը»*, բայց դա հենց ինքը՝ *«կյանքի օրենքն»* է, որ կյանքի հաստատումն է դառնում, սիրո ու մարդու մեծարումը: Նաեւ այդ ամեն մարդկայինի դեմ էին գործում թուրքերը: Արնախում այդ ցեղի բուն էությունը գրողը բացահայտում է թուրք սպայի՝ հղի Օսանին ասված խոսքերով. *«Մենք հայի դեմ ենք կռվում, եւ նշանակություն չունի, թե այդ հայը կին է կամ երեխա, ծերունի է կամ պառավ, ծնվում է կամ ծնվելու վրա է»* (էջ 223):

Զենք պահանջող թշնամուց մշակման համար փոքրիկ հողակտոր խնդրելու գնացած Միքայելը նենգորեն սպանվում է: Նրա մահն ազդակ է դառնում զեյթունցիների համար՝ մեկ անգամ եւս համոզվելու, որ



իրենց մահը եւս անխուսափելի է, եւ ոչ մի պարագայում չի կարելի վստահել թշնամուն, որ պիտի հնչեցնել վրեժի փրկարար երգը. *«Երգը փրփրաց, ծավալվեց... Դա մի դղիրդ էր, որոտ: ....Հեղեղվում էր շառաչող գետը... Շարժվում էր հողը...»* (էջ 191):

Վեպում առկա են նաեւ հաջողված մի շարք այլ կերպարներ՝ Բու Մանուկը, Նազարեթը, ժանգ Սեդրակը, պատանի Փոփոն, ծերունի Թումասը (որ մարմնավորում է հայ մարդու ու բնության հավերժական կապն ու միաձուլում), որոնք թեեւ հանդես են գալիս առանձին դրվագներում ու դեպքերում, սակայն իրենցով տիպականացնում ու ամբողջացնում են շրջանի համապատկերը, արտացոլում ժողովրդական զանգվածների մտածողությունն ու զգացողությունը, դրսեւորում համարձակության ու քաջության օրինակներ:

Ժողովրդական կամքի ու իմաստնության արտահայտիչ է Արամի հայրը, որն իր պատրաստած վերջին զենքը տալիս է Փառենին՝ նրան ու մյուսներին ուղղելով իր ծերունական պատգամը. *«Կռվեցեք մինչեւ վերջին շունչը: Եթե փամփուշտը վերջանա, կռվեցեք քարերով, քարը վերջանա՝ փայտերով, փայտը ջարդվի՝ ձեռքով ու եղունգներով. կռվեցեք մինչեւ արյուն չմնա երակների մեջ»* (էջ 211–212):

Դարերի խորքից եկող այդ պատգամն ապրեցնող այն ուժն էր, որ հնչել էր ու հար հնչելու է հայ մարդու համար, նրա գոյատեւելու երաշխիքներից մեկը նաեւ գալիքի քառուղիներում. *«Մ՛զգ,—* գրել է Շահնուրն իր «Թերթիս կիրակնօրեայ թիւը» գրքում (Բեյրութ, 1958, էջ 9)՝ խոսքն ուղղելով ողջ հայությանը,— *Կռուէ՛ ամբողջութեամբը քու միսերուդ: Եթէ՛ միսերդ ինկան պատառ-պատառ, կռուէ դնդերներո՛վդ, ջիղերո՛վդ, երակներո՛վդ:*

Եթէ պայքարը զանոնք լափեց՝ կռուէ
ոսկորներո՛վդ:
Եթէ ոսկորներդ փշրուեցան, կռուէ ծուծո՛վդ:
Եթէ ծուծ չմնաց, կռուէ աճիւններո՛վդ:
Եթէ ասոնք ալ տարտղնուեցան,
կորսուեցան, չքացան, այն ատեն կռուէ՛,
ազգ, հերոսո՛վդ»:

Ալաջաջյանը վեպում կերտել է թշնամու, հատկապես ջարդարար թուրքի տարաբնույթ տիպեր՝ խարդախ, նենգ, անարդար եւ մանավանդ՝ դաժան (Շեւքեթ, Շեբեբ եւ այլք). բոլորն էլ օժտված ընդհանուր նույն վարքով՝ թալանչի (Հակոբ Մնձուրին կասեր՝ թուրքը «խառնուածքով սպառող է, արտադրող չէ»), մարդասպան ու հայատյաց: Այդպիսի մեկն է Ալի Քեհյան՝ վանք անարգող, ամբարտավան: Երբ Տրդատը շանսատակ է անում Աստծու տուն տրորող հոխորտ այդ արարածին, ժանգ Սեդրակը հարկ է համարում քաշել նրա ականջը եւ ասել մի քանի բառ, սովորական մարդկային բառեր. *«Լավ բան չէ խաղաղ հողագործին սպանելը, հասկացա՞ր»* (էջ 54):

Սակայն թուրքը, ինչպես կենդանության ժամանակ այդ չէր հասկացել, այնպես էլ մեռած ժամանակ այն չի հասկանում: Իսկ առհասարակ կա՞ թուրք, որ հասկանա սովորական մարդկային այդ խոսքը: Եվ կա՞ որեւէ արդար գործ, որ կատարվեր այդ երկրում, երկիր, ուր տիրում էին ավերն ու սպանդը, երկիր, որի ողջ պատմությունն ամփոփվել է արյան հեղումների ու այլոց հայրենիքների գրավման մեջ:

Վեպի երկրորդ մասի սկզբում ներկայացնելով Մարաշ քաղաքի ողբերգական վիճակը՝ գրողն այն նմանեցնում է բանտի: Թուրքերը գրավել էին քաղաքը, ոչնչացրել ֆրանսիական զորագունդը:

Այսպես կոչված՝ *«դաշնակից»* պետություններն այդպես էլ չզինաթափեցին Անատոլիայում հավաքված քեմալական բանակը, որը, օգտվելով այդ *«դաշնակիցների»* միջեւ առկա անհաշտելի հակասություններից, զինվեց նրանց իսկ օգնությամբ եւ օրեցօր էլ ավելի հզորացավ:

Մարաշի անկումից հետո Զեյթունը կորցնում է իր կապը նաեւ Հաճընի ու հայաբնակ այլ վայրերի հետ՝ դառնալով աշխարհից կտրված մի օազիս՝ շրջապատված թուրքական բնակավայրերով:

Շարունակելի

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Դսեղի պատմաճարտարապետական նշանավոր հուշարձանները

➥ էջ 1, 2

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին (VII դ.)՝ շրջապատված քարե ցածրիկ ցանկապատով, գտնվում է Դսեղի կենտրոնում պահպանված միջնադարյան գերեզմանոցներից մեկի տարածքում՝ Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանի հարեւանությամբ:

Կառույցի նախնական վիճակից քիչ բան է պահպանվել, եկեղեցին գրեթե ամբողջությամբ նորացված է (1900 թ.), նշմարվում են առնվազն եռակի վերանորոգումների հետքեր: Այժմյան եկեղեցին ուղղանկյուն դահլիճի հորինվածքով է, արեւելյան կողմում գտնվում է բեմից ավելի քան 3 մ հետ ընկած խորանը՝ արեւելյան եւ արեւմտյան կողմերին կից ավանդատներով: Զանգակատան արեւելյան ճակատին՝ պատուհանի պսակից վերեւ, ճանկերում գառ բռնած երկգլխանի արծվի քանդակ է՝ նման Բարձրաքաշ Ս. Գրիգոր վանքի գավթի պատի քանդակին: Այս քանդակից ձախ պահպանվել է եղնիկի սլացիկ պատկերի ընդհանուր ուրվագիծ: Զանգակատան հարավային պատին հազիվ նշմարվող գրերով արեւային ժամացույցն է:

Դսեղի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին վաղմիջնադարյան այն ճարտարապետական հուշարձաններից է, որոնք ուշագրավ են տարբեր դարաշրջաններին վերաբերող վերանորոգումների վարպետորեն զուգակցմամբ՝ այդ դարաշրջաններին բնորոշ հարդարանքի տարրերով:

Դսեղի նշանավոր *«Սիրուն խաչ»* (*«Սուրբ տերունական»*) խաչքարը գտնվում է գյուղի հյուսիսարեւելյան կողմում՝ Քարինջ գյուղի դիմաց՝ Մարց գետի ձախափնյա կիրճի եզրին: Խաչքարը կանգնեցված է եռաստիճան բարձր պատվանդանի վրա, բարձրությունը պատվանդանի հետ 4,20 մ է, կերտված է վարդագույն քարից: Խաչքարի վրա պատկերված է Փրկիչը՝ գահավորակի վրա նստած. աջ եւ ձախ կողմերում կան վիմագիր համառոտագրումներ՝ ՅՍ — ՔՍ (Յ[իսու]ս Ք[րիստո]ս): Խաչքարը համեմատաբար բարվոք վիճակում է, վնասված է միայն խաչաքանդակի ձախ թեւի ստորին հատվածը: Ըստ ծաղկյալ խաչն ու հյուսկեն վարդյակն ընդգրկող եզրային մասին պահպանված արձանագրության՝ խաչքարը կանգնեցվել է Մամիկոնի ու իր որդի Վարդանի իշխանության օրոք՝ Հայրադեղի կողմից (թվականը չի պահպանվել): Հուշարձանը մոտավոր թվագրվում է XIII դարով:

Քառակող կոթողը գտնվում է Դսեղ գյուղի կենտրոնական մասում պահպանված միջնադարյան գերեզմանատներից մեկում: Կոթողի սյան բարձրությունը 2 մ է, կերտված է բաց դեղնավուն ֆելզիտից, կանգնեցված է տուֆաքարեխորանարդաձեւ եռաստիճան պատվանդանին, որի վերին միակտոր քարի վրա երեւում է խաչապատկեր, իսկ մյուս կողմում կա վիմագիր արձանագրություն: Կոթողը հավանաբար վաղմիջնադարյան ժամանակաշրջանի ստեղծագործություն է, որի չորս ճակատները եղել են քանդակապատ: Արեւմտյան ճակատը զարդարված է ստորին երկու կողմերում դափնու տերեւներով ոճավորված հավասարաթեւ խաչով: Հարավային ճակատին փորագրված է արձանագրություն: Դսեղի քառակող կոթողն աչքի է զարնում իր ինքնատիպ ու կատարողական բարձր արվեստով ոճավորված զարդաքանդակներով:

Քառակող կոթողից հարավ-արեւելք գտնվում է Վահրամ վարպետի կերտած բարձրարվեստ *«Խաչելություն»* խաչքարը (1281 թ.), որը հիացնում է իր պատկերագրական հարստությամբ, պատկերաքանդակների, զարդամոտիվների ու վիմագրերի ներդաշնակ միահյուսմամբ:

Ս. Գրիգոր Լուսավորիչ

* * *

Ըստ ժողովրդական ստուգաբանության՝ Դսեղ գյուղն իր անունն ստացել է «Դուրս տեղ» բառակապակցությունից՝ իբր նկատի առնելով գյուղի դիրքը, տեղանքը շրջակայքից զատված, առանձնացած լինելու հանգամանքը:

Բարձրաքաշ Սուրբ Գրիգոր վանքը եղել է Դսեղի Մամիկոնյան իշխանների տոհմական տապանատունը: Մեծ լոռեցին՝ հանճարեղ Հովհաննես Թումանյանը, իրեն համարում էր Դսեղի Մամիկոնյանների շառավիղը:

Վանք տանող ճանապարհին է գտնվում այն սառնորակ աղբյուրը, որից «Գիքորը» ֆիլմում ջուր են խմում Համբոն ու Գիքորը: Այդ պատճառով էլ տեղացիները հետագայում աղբյուրն անվանել են «Գիքորի աղբյուր»:

* * *

Դսեղի Սրբոց Քառասնից մանկանց վանքը կոչվել է Քառասուն մանկանց անունով՝ ի հիշատակ քրիստոնյա այն 40 երիտասարդների, որոնք ենթարկվել են դաժան խոշտանգումների, սակայն հավատափոխ չեն եղել: Քառասուն մանուկներն Արեւելքի ամենապաշտվող սրբերից են:

Ըստ երանաշնորհ Շնորհք պատրիարքի «Համաքրիստոնեական սուրբեր» գրքի՝ երբ իմանում են, որ Կապադովկիայի կայսերական բանակում քրիստոնյաներ կան (316 թ.), հարցաքննության են կանչում նրանց եւ ստիպում ուրանալ Քրիստոսին: Տանջալի կտտանքներից հետո էլ, սակայն, նրանք հավատարիմ են մնում Քրիստոսին, ուստի վճռվում է բոլորին գցել Սեբաստիայի մոտ գտնվող՝ արդեն սառչող լիճը, իսկ ափին բաղնիք տաքացնել, որպեսզի նրան, ով ուրանա Քրիստոսին, թույլ տրվի լճից դուրս գալ եւ բաղնիք մտնել: Մեր շատ եկեղեցիներում այդ օրը հատուկ պատրաստված քառասուն կանթեղների մեջ լցնում են ժողովրդի ընծայաբերած ձեթից ու վառում պատրույգները՝ ի հիշատակ այդ սրբերի անսասան հավատի, որոնք, ամբողջ գիշեր սառցե լճում մնալով, համբերեցին, տոկացին մինչ ի մահ, բացի մեկից, որը, լճից դուրս գալով, մտնում է տաք բաղնիք եւ իսկույն մեռնում: Այդ պահին նահատակների համար երկնքից իջնում էր քառասուն լուսեղեն պսակ: Հսկող պահակներից մեկը, տեսնելով, թե ինչ է կատարվում, կամավոր նետվում է սառցալիճը եւ իրեն նույնպես քրիստոնյա հայտարարելով՝ նահատակվում է մյուսների հետ՝ ստանալով քառասուներորդ լուսապսակը: Ահա այս սրբերի հիշատակի տոնակատարության ժամանակ էլ օրհնվում է կանթեղների ձեթը, իսկ արարողության ավարտին բաժանվում է հավատացյալներին:

Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին Սեբաստիայի Քառասուն մանուկների հիշատակը նշում է Մեծ պահքի չորրորդ՝ Տնտեսի կիրակիին հաջորդող շաբաթ օրը (կամ Մեծ պահքի հինգերորդ՝ Դատավորի կիրակիին նախորդող շաբաթ օրը):

Ավանդության համաձայն՝ Քառասուն մանուկների նահատակությունից որոշ ժամանակ անց հալածյալ քրիստոնյաների մի խումբ Կեսարիայից, Տարոնից եւ այլ վայրերից տեղափոխվում է Դսեղ գյուղից դեպի Դեբեդի կիրճ տանող՝ «Տախտեր» կոչվող նախկին բնակավայր եւ ի հիշատակ նահատակված Քառասուն մանուկների՝ կառուցում Սրբոց Քառասնից մանկանց վանքը:

* * *

Թեեւ արձանագրությամբ վավերացված է, որ 1234 թ. Հովհաննես վարդապետն ու իր եղբայր Սարգիսն են կառուցել Սուրբ Հարություն մատուռը, սակայն ավանդաբար տեղացիները մատուռն անվանում են «Ագռավի տապան» ու պատմում բերնեբերան անցած հետեւյալ ավանդությունը:

Բարձրաքաշ Ս. Գրիգոր եկեղեցին կառուցող բանվորները կերակուր եփելու համար մի մեծ կաթսա են տանում մոտակա Մարց գետը եւ ջրով լցնելով՝ դնում են կրակի վրա: Երբ դեռ կերակուրը եփվում էր, եկեղեցու վերեւից թռչող արծվի մագիլներից կախված թունավոր օձը հանկարծակի ընկնում է ցած՝ ճիշտ եւ ճիշտ եկեղեցու շինարարների համար եփվող ճաշի կաթսայի մեջ: Դա տեսնում է մի ագռավ, արագորեն թռչում է կաթսայի մոտ՝ փորձելով ճաշը եփողին ու վարպետներին հասկացնել, որ հանկարծ չուտեն այդ կաթսայից: Խեղճ թռչունը, սակայն, չի կարողանում հասկացնել, որ կաթսայի ճաշը թունավորված է: Երբ գալիս է ճաշելու ժամը, ագռավը կռկռալով սկսում է խելահեղ պտույտներ անել կաթսայի վրայով: Շինարարները ուշադրություն չեն դարձնում եւ նստում են ճաշի: Հանկարծ ագռավը սուր կռկռոցով նետվում է կաթսայի մեջ: Եկեղեցու շինարարները, կերակուրը պղծված համարելով, շրջումթափում են կերակրի կաթսան: Մեծ է լինում նրանց զարմանքն ու հիացումը, երբ ճաշի մեջ նկատում են թունավոր օձի մարմնի մասերը եւ նոր միայն հասկանում ագռավի անհանգիստ թեւաբախումների ու կատարածի իմաստը: Շինարարները երախտագիտությամբ պատանքում են ագռավի մարմինը, անկեղծորեն տխրում եւ սգում, ապա պատշաճ հանդիսությամբ թաղում եկեղեցու մոտակայքում, գերեզմանի վրա մատուռ բարձրացնում, իսկ մատուռի ներսում՝ գերեզմանաթմբի վրա, մի մեծ սալաքար գցում: Այդ օրվանից մատուռն ագռավի պատվին կոչվում է «Ագռավի տապան»:

Այնուհետեւ Դսեղ գյուղում երկու գողտրիկ ավանդույթ է ձեւավորվում. այդուհետ գյուղի որսորդներն այլեւս երբեք ագռավի վրա հրացան չեն ուղղում եւ ագռավ չեն սպանում: Ագռավի հիշատակին նվիրված մյուս ավանդույթն էլ ձեւավորվում է հողագործ-մշակների շնորհիվ: Դսեղ գյուղի հանդերում աշնանացան կամ գարնանացան անելիս սերմնացանները միշտ երեք լիաբուռ հացահատիկ են շաղ տալիս արտերին՝ դա համարելով ագռավի բաժինը:

Արման ՄԱԼՈՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Հերոսների դրամատիկ հոգեվիճակները «Գեւորգ Մարզպետունի» վեպում

➥ էջ 5

Մուրացանը գիտակցում էր, որ ազգը բաղկացած է անհատներից, իսկ անհատն ամեն բան լինելուց առաջ մարդ է՝ զգացմունքների, կրքերի բնական էությամբ, բայց կա գերագույն ճշմարտություն՝ հասարակական բարոյականությունը: Սա է տնօրինում մարդու առաքինության կերպը, ուստի եւ այնտեղ, որտեղ անձնական մղումը հասարակական շահից առաջ է ընկնում, վերաճում է մոլորության եւ ծնում չարիք: Ս. Սարինյանի կարծիքով՝ այս դեպքում որքան մեծ է անհատի հասարակական իրավունքը, նույնքան մեծ է նրա անձնական մոլորության պատճառած չարիքը (*տե՛ս Սարինյան Ս., նշվ. աշխ., էջ 185*):

Ըստ Մուրացանի՝ պետական գործիչը պետք է անսահման բարձր լինի հասարակ մահկանացուներից եւ հաղթահարի իր անձնական ապրումներն ու թուլությունները, կարողանա սթափ գնահատել իրավիճակը, ճիշտ որոշումներ կայացնել, անձնական շահերը ստորադասել հասարակականին:



Աշոտ Երկաթի կերպարը դրսեւորվում է թեեւ ոչ համաչափ, բայց փոխադարձաբար իրար լրացնող ու բացասող 2 մակարդակներում՝ մինչեւ ամուսնությունը եւ ամուսնությունից հետո (*տե՛ս Սաֆարյան Վ., նշվ. աշխ., էջ 156*): Առաջին մակարդակում Աշոտը եղել է ուժեղ արքա, ռազմաքաղաքական հզոր գործիչ, որի մասին իմանում ենք Սահականույշի եւ Սեդայի զրույցի միջոցով: «Պետք է տեսնեիր դու նրան այն ժամանակ, երբ յուր զորքերով անցնում էր Գարդմանից: Ինչպես լեռնային մի հեղեղ, ինչպես գարնանազայր մի փոթորիկ, այնպես անցավ նա մեր դաշտերից: Ինքը արքայորդին... Կարո՞ղ եմ միթե նկարագրել, կատարյալ հին դարերի մի դյուցազն. երբ գալարափողերը յուր գալուստը հայտնեցին, Գարդմանը կարծես տեղից դղրդաց...»,— պատմում է Սեդան (էջ 37):

Սահականույշ թագուհու եւ նրա դայակ Սեդայի զրույցներում վերականգնվում ու միահյուսվում են անցյալի իրողությունները, կենդանանում Աշոտ Երկաթի կյանքի ու գործունեության առաջին շրջանի պատմությունները, որոնցում նա հանդես է գալիս իբրեւ ռազմաքաղաքական հզոր գործիչ, որի օրոք Հայաստանում խաղաղություն է հաստատվում, որը չնայած երիտասարդ տարիքին՝ «վիրավոր առյուծի նման արշավում էր երկրի այս կամ այն կողմը»՝ երկիրն ազատելու արաբ զավթիչներից, համախմբելու նախարարներին ու հասարակ ժողովրդին: ➥ էջ 8

Տյառնընդառաջը կերպարվեստում

➥ էջ 6

Դատավորներ ԺԳ 1-ում կարդում ենք. *«Իսրայելցիները շարունակեցին չարիք գործել Տիրոջ առաջ, եւ Տերը նրանց 40 տարի այլազգիների ձեռքը մատնեց»*:

«Այն այլազգին 40 օր, առավոտ կանուխ ու երեկոյան, գալիս արծանացած կանգնում էր իսրայելցիների առաջ» (Ա Թագ. ԺԵ 16):

Եղիան Սինա լեռան վրա *«նայեց ու տեսավ իր սնարից կախված նկանակ ու ջրի կուժ... Նա վեր կացավ, կերավ ու խմեց, այդ կերակրի զորությամբ 40 օր ու 40 գիշեր քայլեց մինչեւ Քոբեր լեռը»* (Գ Թագ. ԺԹ 8):

Եզեկիելը, խոսելով Երուսաղեմի պաշարման մասին, ասում է. *«Դարձյալ կննջես աջ կողքիդ վրա, եւ Հուդայի տան անիրավությունները կկրես 40 օր. յուրաքանչյուր տարվա դիմաց մեկ օր էր սահմանել քեզ»* (Եզեկ. Դ 6):

Իսրայելում 40 տարի իշխեց Դավիթ թագավորը, 40 տարի իշխեց նաեւ Սողոմոն թագավորը:

Հին Կտակարանում բազում անգամ տեղ գտած այս 40 թվին հանդիպում ենք նաեւ Նոր Կտակարանում:

Հիշենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի՝ 40-օրյա փորձությունն անապատում (Մատթ. Դ 2), 40 ամիս քարոզեց, Նրա հրաշափառ հարությունից մինչեւ համբարձում տեւեց 40 օր. *«Նա իր չարչարանքներից հետո իրեն կենդանի ներկայացրեց նրանց առաջ շատ ապացույցներով՝ 40 օրերի ընթացքում երեւալով նրանց եւ խոսելով Աստծո արքայության մասին»* (Գործք Ա 3), 40 օր մնաց գերեզմանում:

40 օր է տեւում Մեծ պահքը եւ այլն:

Գործ՝ Ռեմբրանդտի

Թվարկված օրինակները հուշում են, որ 40 թիվն իմաստային կամ խորհրդապաշտական առումով ամենեւին էլ միանշանակ չէ. այն հոգեւոր վերելքի, պահքի, փորձության, մաքրության, թափառումի, ապաշխարության եւ սպասումի շրջան է, պատժիչ գործողությունների քանակ, մի վիճակից մյուսին անցնելու ժամանակահատված եւ այլն: Ընդունենք թե չընդունենք՝ թվերը պատահականություններ չեն: Ողջ տիեզերքի, տիեզերական բոլոր մարմինների՝ համաստեղությունների, մոլորակների ու արբանյակների, աստղերի ու աստղաբույլերի հիմքում ընկած են մաթեմատիկական կատարյալ հաշվարկներն ու մաթեմատիկական անբեկանելի օրինաչափությունները:

Այնուհանդերձ՝ այս խորհրդավոր 40 թվի գաղտնիքը թողնելով հետագա ուսումնասիրողներին՝ դառնանք տյառնընդառաջի խորհրդին:

Եվ այսպես՝ Մարիամն ու Հովսեփը Մանկանը տանում են Տաճար: Տաճարում նրանց ընդառաջ է գալիս՝ *«Սիմեոն անունով մի մարդ... այդ մարդը արդար ու աստվածավախ էր եւ ակնկալում էր Իսրայելի մխիթարությունը, եւ Սուրբ Հոգին էր նրա մեջ»* (Ղուկ. Բ 25): Այս ծերունուն Սուրբ Հոգուց հրամայված էր, որ նա չի մահանալու, մինչեւ չտեսնի Տիրոջ Օծյալին: Եվ ահա Սիմեոն ծերունին մանուկ Հիսուսին իր գիրկն է առնում, օրհնում է Աստծուն եւ ասում. *«Այժմ, ո՛վ Տեր, խաղաղությամբ արձակիր քո ծառային՝ ըստ քո խոսքի. որովհետեւ աչքերս տեսան փրկությունը քո, որ պատրաստեցիր բոլոր ժողովուրդների առաջ. լույս, որ կլինի հայտնություն հեթանոսների համար եւ փառք՝ Իսրայելի քո ժողովրդի համար»* (Ղուկ. Բ 29): Այս խոսքերից զարմացած Մարիամին ու Հովսեփին Սիմեոն ծերունին օրհնում է ու Մարիամին դիմելով՝ ասում. *«Ահա՛ սա նա է, որ պատճառ է դառնալու Իսրայելի մեջ շատերի անկման ու բարձրացման եւ նշան՝ հակառակության: Իսկ քո հոգու միջով էլ սուր պիտի անցնի, որպեսզի բազում սրտերի խորհուրդներ հայտնի դառնան»* (Ղուկ. Բ 33–35): Ղուկաս ավետարանիչը հաղորդում է նաեւ, որ՝ «....*այնտեղ կար մի մարգարեուհի՝ Աննա անունով՝ Փանուելի դուստրը, Ասերի ազգատոհմից. սա տարիքով շատ առաջացած էր եւ ամուսնու հետ միայն յոթը տարի էր ապրել՝ սկսած իր կուսությունից: Նա մոտ ութսունչորս տարեկան մի այրի էր, որ չէր հեռանում տաճարից, այլ ծոմապահությամբ եւ աղոթքով գիշեր-ցերեկ ծառայում էր Աստծուն: Սա եւս նույն ժամին վեր կացավ եկավ, գոհություն էր մատուցում Տիրոջը եւ խոսում էր մանկան մասին բոլոր նրանց հետ, որոնք Երուսաղեմի փրկությանն էին սպասում»*:

Ինչպես գիտենք, Ղուկասը հրեա չէր, եւ երբեք չի էլ ապրել Երուսաղեմում, բայց Աննայի ով լինելու մասին հնարավորինս ամբողջական տվյալներ է հաղորդում, իսկ Սիմեոն ծերունու մասին, բացի «արդար» եւ «աստվածավախ» պատվանուններից, ուրիշ ոչինչ չի ասում, այն դեպքում, երբ ծերունու՝ Օծյալի կյանքի մասին գուշակումներն ավելի քան ռեալ էին եւ հավաստի, որոնց մասին մենք հետագայում իմանում ենք Տիրոջ կյանքի ու մահվան ընթացքին ծանոթանալով: Իսկ այն, թե Սիմեոնն այն 72 թարգմանիչներից մեկն էր, որոնք Պտղոմեոս Երկրորդի հանձնարարականով թարգմանել էին եբրայերենից հունարեն Հին Կտակարանի գրքերը, ամենայն հավանականությամբ հետագա դարերի ավանդություն է: Ինչեւէ, ավանդույթն ասում է, թե թարգմանական աշխատանքների ժամանակ Սիմեոնը Եսայու գրքում հանդիպում է *«Ահա կույսը պիտի հղանա ու որդի ծնի»* (Եսայի, Է 14) նախադասությանը եւ մտածելով, որ դա սխալմունք է, ջնջում է այն: Սակայն դրա շուրջ երկար մտորելուց եւ նիրհելուց հետո արթնանում եւ տեսնում է իր ջնջած տողերը նորից վերականգնված են, այն էլ՝ ասես ոսկե տառերով: Սիմեոնը փառաբանում է Աստծուն եւ երանի տալիս նրանց, ովքեր պիտի տեսնեին Օծյալ Մանկանը՝ Կենդանի Աստծուն եւ գրկեին Նրան:

Այսպիսով, համաձայն Եկեղեցու հայրերի, Սիմեոնը եւ Աննան խորհրդանշում են Փրկչին ընդառաջ դուրս եկած Հին Ուխտի ողջ մարդկությանը: Հետագայում Նոր Ուխտի մարդկության համար տոնը դարձավ Տիրոջն ընդառաջ գնալու հիասքանչ հրավեր: Եվ ինչպես Աստված խոնարհվեց ու դեպի մեզ եկավ մեր փրկության համար, այդպես էլ մենք պետք է գնանք Նրա հետ հանդիպման: Ինչպիսի՜ պատիվ մեղավոր մարդուն, ինչպիսի՜ արժեւորում: Եթե Հին Ուխտի մարդկությանը լսելի էր լոկ Աստծու ձայնը, ապա Տաճարում նոր մարդկությունը բախտ ունեցավ ոչ միայն հանդիպելու, տեսնելու իր Աստծուն, այլեւ ապրելու Նրա հետ մարդկային կյանքով, լսելու Նրա քարոզները՝ մարդ արարածի առաքելության, հոգեւոր բարձրացումի, փրկագործության, կյանքի ու մահվան խորհուրդի, երկրային ժամանակավոր ու երկնային հավիտենականության մասին:

Ուստի ամեն տարի՝ փետրվարի 14-ին, երբ մենք՝ Տիրոջ անունով քրիստոնյա կոչվածներս, գնում ենք տաճար՝ եկեղեցի, գնում ենք հանդիպելու մեր Աստծուն, Նրան, Ում կարիքը մենք՝ հայերս այսօր առավել քան երբեւէ ենք զգում: Ցավոք, այսօր ողջ մարդկությունը, ինչպես եւ մենք շատ ենք հեռացել Աստծուց, շատ ենք դարձել եսակենտրոն ու ինքնաբավ, առանց հասկանալու, որ երբ հեռանում ես քո Ստեղծիչից, հեռանում ես ճշմարիտ Կյանքի կենարար ու կենսատու ակունքներից: Երանի թե լիներ այնպես, որ ազգովի, ինչպես 301 թվականին, անկեղծորեն դառնայինք դեպի Աստված, ուղղեինք մեր քայլերը դեպի հավիտենական Լույսը: Գնայինք ի սրտե հանդիպալու Նրան, Ով այնքան սիրեց մեզ, գնայինք հանդիպելու Նրան ամեն օր, ամեն ժամ, որպեսզի արժանանայինք այն երանությանը, որի մասին Քրիստոսն Ինքը ասաց. «*Երանի՜ է ձեր աչքերին, որ տեսնում են, ու ձեր ականջներին, որ լսում են: Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ շատ մարգարեներ ու արդարներ ցանկացան տեսնել, ինչ որ դուք տեսնում եք, բայց չտեսան*» (Մատթ., ԺԳ 13):

Շարունակելի

Աստղիկ ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ

Հերոսների դրամատիկ հոգեվիճակները...

➥ էջ 5, 7

«Փափագում էի տեսնել երիտասարդ թագավորին, այն դյուցազնին, որ այնքան կարճ ժամանակում ընկճեց, խորտակեց թշնամու զորությունը, մաքրեց երկիրը բռնավորներից, ազատեց ժողովուրդը ստրկությունից, գրավեց ու գերեց իշխանների սիրտը եւ նրանց բոլորին ոգեւորեց այնքան, որ միմյանց դեմ ունեցած ամեն գժտություն մոռանալով՝ եկան ժողովվեցան յուր շուրջը, արքայական թագով յուր արժանավոր գլուխը պսակելու» (էջ 52): Աշոտ Երկաթի անունը լսելուց անգամ թշնամիները սարսափում էին, քանի որ գիտեին, որ հարկ եղած դեպքում նա կարող է դաժանաբար պատժել թշնամիներին. հոր վրեժը լուծելու համար նա ջարդել էր Յուսուֆի զորքը, իսկ նրանց բոլոր նշանավոր իշխաններին մորթազերծ անել էր տվել եւ ամրոցների աշտարակներից կախել:

Աշոտ Երկաթն սկզբում զոհաբերել է իր անձնականը ազգին, հասարակությանը, հրաժարվել իր սիրած կնոջից՝ Ասպրամից, ամուսնացել Սահականույշի հետ, որպեսզի հայրենիքը փրկելու համար օգտագործի նաեւ Գարդմանա հզոր իշխան Սահակ Սեւադայի ուժերը, այսինքն՝ առաջին մակարդակում նա հանդես է գալիս իբրեւ հզոր արքա, որը կարողացել է անձնականը ստորադասել հասարակականին:

Սակայն երկրորդ մակարդակում Աշոտ Երկաթն արդեն դառնում է սովորական մահկանացու, որը ենթարկվում է իր զգացմունքներին, կորցնում իր երբեմնի անկոտրում կամքն ու վճռականությունը: Ազգային խնդիրները լուծելուց հետո արքան փորձում է վերագտնել իր կորցրած երջանկությունը, ինչը, սակայն, պահանջում էր հասարակական շահն այս անգամ ստորադասել անձնականին: Աշոտ Երկաթը նույնսիկ նսեմ քայլերի է դիմում՝ իր անթույլատրելի եւ հզոր արքային ոչ վայել արարքները քողարկելու համար: Այս մասին իմանում ենք Մարզպետունի–Սեւադա զրույցի ժամանակ, երբ Սեւադան պատմում է, որ փորձել է դարձի բերել մոլորված փեսային, նրան ճիշտ ճանապարհի վրա կանգնեցնել, սակայն Աշոտն սկզբում փորձել է նենգորեն ամեն ինչ հերքել. «Նա առաջ չկամեցավ խոստովանել յուր հանցանքները, ծիծաղեց դառը փորձից խրատված հոր կասկածների վրա եւ կամեցավ յուր ճարտար լեզվով նկարել իմ առաջ կասկածի ճիվաղային կերպարանքը՝ նրանից ինձ հեռու փախցնելու համար» (էջ 109), իսկ երբ Սեւադան տեսնում է, որ փեսան շարունակում է արատավորել Սեւադյաց տան անունը, նամակ է գրում նրան՝ զգուշացնելով վտանգավոր հետեւանքների մասին, եւ այս անգամ էլ արժանանում արքայի հեգնանքին. «Մի թե գարդմանացիք սիրահարների դեմ էլ են պատերազմում» (էջ 110): Նա դրժում է անգամ Սեւադայի եւ Սյունյաց եպիսկոպոսի առջեւ իր արած երդումը՝ թողնել Ասպրամ իշխանուհու հետ ունեցած իր հարաբերություններն ու վերադառնալ օրինական կնոջ մոտ:

Շարունակելի

Սամվել ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Կարգալույծ են հռչակվել Մխիթար աբդ. Գրիգորյանը եւ Ատոմ քհն. Ասատրյանը

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Մխիթար աբդ. Գրիգորյանը:

Տնօրինության համար հիմք են ծառայել Մայր Աթոռի կարգապահական հանձնախմբի եզրակացությունը, Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի թեմական առաջնորդի դիմումը, ինչպես նաեւ հայր Մխիթարի եկեղեցական ծառայությունից հրաժարվելու մասին խնդրագիրը:

Հիմք ընդունելով Արցախի թեմի թեմական առաջնորդի դիմումը եւ Մայր Աթոռի կարգապահական հանձնախմբի եզրակացությունը՝ հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել նաեւ Արցախի թեմի հոգեւոր սպասավոր Ատոմ քհն. Ասատրյանը՝ հոգեւոր իր ծառայության վայրն ինքնակամ լքելու պատճառով:

Կարգալույծ եկեղեցականներն այսուհետ կդասվեն աշխարհականների շարքին՝ Արտակ Գրիգորյան եւ Ռոբերտ Ասատրյան ավազանի անուններով:

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝ **krishayas.wordpress.com**
Ստոր. տպագր. 31.03.2022 թ.
Տպաքանակը՝ 1225